

ՀԱՎԱՍԱՐ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՅ՝
ՀԱՎԱՍԱՐ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում հաշմանդամության
հետևանքների հաղթահարման
գործողությունների ազգային ծրագիր

Երևան 2005

Գիրքը Երևանում և ՀՀ 10 մարզերում իրականացված «Հավասար իրավունքներից՝ հավասար հնարավորություններ» կոալիցիոն ծրագրի արդյունք է: Նրանում ներկայացվում է Հայաստանում Հաշմանդանության հետևանքների հաղթահարման գործողությունների ազգային ծրագիր (ՀՀՀԳԱԾ) 2006-2010թթ. համար:

Հավելվածներում տեղ են գտել Երևանում և ՀՀ բոլոր մարզերում անցկացված հաշմանդանների իրավունքների իրականացման մոնիտորինգի արդյունքները և Հաշմանդանների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Սույն ծրագիրը իրականացվել է «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի և Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ-ների կոալիցիայի կողմից:

Այս հրապարակման մեջ արտահայտված մոտեցումները պարտադիր չէ, որ արտահայտեն Եվրոպական Հանձնաժողովի կարծիքը

© «Հավատ» ՀԿ, 2005

© «Ունիսոն» ՀԿ, 2005

Նախաբան

Հաշմանդամության հիմնախնդիրներն առնչվում են հասարակայնության մի լայն հատվածի: Ներկայումս աշխարհում 600 միլիոնից ավելի մարդ ունի հաշմանդամություն, Եվրոպական Միության երկրներում՝ 37 մլն, Հայաստանում՝ 118000, որից մոտ 10000-ը կազմում են երեխաները: Գիտական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ զարգացած երկրներում 50-ից 80 տարեկանների միջակայքում 70%-ի հավանականություն կա, որ ցանկացած ոք կարող է ձեռք բերել հաշմանդամություն: Հետևաբար, կյանքի երկարակեցության աճին զուգահեռ, այս ցուցանիշները զգալիորեն աճելու միտում ունեն:

Եթե նախկինում ընդունված էր հաշմանդամության բժշկական մոդելը, ըստ որի հաշմանդամությունը դիտվում էր որպես հիվանդություն, թուլություն, և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնականում բժշկական, վերականգնողական ուղղվածություն ունեին, ապա ներկայումս համաշխարհային ճանաչում է ստացել հաշմանդամների հիմնախնդիրների դիտարկման սոցիալական մոդելը: Այս նոր գաղափարախոսությունը ամրագրված է 1993թ. ՄԱԿ-ի ստանդարտ կանոններում և ենթադրում է այնպիսի իրավիճակի ստեղծում, երբ հաշմանդամները, ի սկզբանե հասարակության մյուս անդամների հետ հավասար իրավունքներ ունենալով, կունենան նաև հավասար հնարավորություններ և պարտականություններ:

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ հաշմանդամ լինելը ամենևին չի նշանակում չմասնակցել կյանքի անցուդարձին: Ավելին՝ հաշմանդամության փաստը չի խոչընդոտել, որ շատ մարդիկ դառնան գիտության, արվեստի, գրականության և այլ ոլորտների խոշորագույն դեմքեր: Անհնար է թվարկել բոլոր այն հաշմանդամներին, որոնք իրենց նշանակալից ներդրումն են կատարել մարդկության զարգացման գործընթացում: Հաշմանդամություն ունեցող նշանավոր գործիչներից հիշատակենք միայն մի քանի կարկառուն անուններ՝ պետական գործիչներ Ալեքսանդր Մակեդոնացի, Բոնապարտ Նապոլեոն, Ջոն Բենեդի, Բիլլ Բիլիտոն, երաժիշտներ Լյուդվիգ վան Բեթհովեն, Նիկոլո Պագանինի, Պյոտր Զայկովսկի, Էլթոն Ջոն, Ռեյ Զարլզ, Ստիվի Ուանդեր, գիտնականներ Ալֆրեդ Նոբել, Ալեքսանդր Բել, Ալբերտ Էյնշտեյն և շատ ուրիշներ:

Հաշմանդամների ներուժն ի օգուտ ողջ հասարակությանն օգտագործելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ: Հաշմանդամության հետ կապված սահմանափակումները հիմնականում պայմանավորված են հասարակության մեջ առկա թերություններով: Վերջիններս վերացնելով՝ կարելի է նվազագույնի

հասցնել այդ սահմանափակումները և ապահովել հաշմանդամների կենսագործունեության համար նպաստավոր պայմաններ:

Մենք քաջ գիտակցում ենք, որ վերոնշյալ նպատակների իրականացման համար պահանջվում է ժամանակ և ծավալուն աշխատանք: Այդուհանդերձ, համոզված ենք, որ մեր վերջնանպատակը՝ հաշմանդամների համար այլ մարդկանց հետ հավասար հնարավորությունների ստեղծումը իրագործելի է, և որ հեռու չէ այն պահը, երբ հաշմանդամը իրեն կզգա Հայաստանի լիարժեք և լիիրավ քաղաքացի:

«ՀԱՎԱՍԱՌ ԻՐԱՎՈՒԹՅԱՆՈՒԾ՝ ՀԱՎԱՍԱՌ ՀԱՄՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

2004թ. հունիսից «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի և Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ-ների կողմից Եվրոպական Միության «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության» շրջանակներում Երևանում և ՀՀ բոլոր 10 մարզերում իրականացվում է «Հավասար իրավունքներից՝ հավասար հնարավորություններ» կոալիցիոն ծրագիրը:

Ծրագրի նպատակն է հաշմանդամ մարդկանց համար այլոց հետ հավասար հնարավորությունների ապահովումը, հաշմանդամներին հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության խթանումը, Հաշմանդամության հետևանքների հաղթահարման գործողությունների ազգային ծրագրի (ՀՀՀԳԱԾ) մշակումը:

Ծրագրի իրականացման սկզբնական փուլում կատարվեց հաշմանդամների խնդիրներին առնչվող ՄԱԿ-ի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի և Հայաստանի իրավական ակտերի վերլուծություն, որն ամփոփում էր հաշմանդամության խնդիրների բազմազանությունը հասարակական կյանքի գրեթե բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականություն, կրթություն, բժշկական սպասարկում, զբաղմունք, սոցիալական



նիայի, Շվեդիայի և Հայաստանի իրավական ակտերի վերլուծություն, որն ամփոփում էր հաշմանդամության խնդիրների բազմազանությունը հասարակական կյանքի գրեթե բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականություն, կրթություն, բժշկական սպասարկում, զբաղմունք, սոցիալական

աջակցություն և այլն: Ձուգահեռ տարվել է պետական կառույցների՝ մասնավորապես ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Կրթության և գիտության, Քաղաքաշինության նախարարությունների, բոլոր մարզերի համապատասխան պետական կառույցների իրազեկում: Երևանում կայացած առաջին կլոր սեղանի ընթացքում, որին ներկա էին նախարարությունների, երևանյան և մարզային ՀԿ-ների, մարզերի պետական կառույցների մոտ 55 ներկայացուցիչներ, ներկայացվել է ծրագիրը, ընտրվել են ծրագրի մարզային համակարգողները: Այնուհետև Հայաստանի 10 մարզերում 2004թ. աշնանը իրականացվել է ծավալուն քարոզչական և բացատրական աշխատանք կլոր սեղանների և սեմինարների միջոցով, որոնց մասնակցել են մարզերի պետական կառույցների և ՀԿ-ների 500-ից ավել ներկայացուցիչներ: Կլոր սեղանների մասնակիցների կողմից լրացվել են հարցաթերթեր՝ հաշմանդամների խնդիրների առնչությամբ մարզում առկա իրավիճակի մասին ինֆորմացիա ու մասնակիցների կարծիքները հավաքագրելու նպատակով: Յուրաքանչյուր մարզում անց է կացվել թեմինգ հաշմանդամ մարդկանց իրավունքների իրականացման մոնիտորինգի կատարման վերաբերյալ: Ձևավորվել է աշխատանքային խումբ բոլոր մարզերի ներկայացուցիչների ընդգրկմամբ: Ձուգահեռ իրականացվել են հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին օրինագծի մշակման աշխատանքներ իրավաբանի և աշխատանքային խմբի աջակցությամբ: 2004թ. նոյեմբեր – 2005թ. հունվար ամիսներին ՀՀ բոլոր մարզերում իրականացվել է մոնիտորինգ: 2005թ. փետրվարի 11, 12-ին Երևանում, Հայկական Կարմիր Խաչի ընկերության Միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոնում կայացավ կոնֆերանս, որի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ տարբեր նախարարությունների (Կրթության և գիտության, Առողջապահության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Քաղաքաշինության, Մշակույթի և երիտասարդության հարցերի), բոլոր մարզերի մարզպետարանների, մարզերի պետական կառույցների և ՀԿ-ների, ԱԺ-ի, մայրաքաղաքի ՀԿ-ների,



միջազգային կազմակերպությունների, մասնավոր հիմնադրամների շուրջ 70 ներկայացուցիչներ, բազմաթիվ լրատվամիջոցներ:

Կոնֆերանսին մասնակցելու համար հրավիրվել էր Շվեդիայի Հաշմանդամության հետազոտությունների ինստիտուտի փորձագետ, SHIA ՀԿ-ի տեղեկատվական բաժնի պատասխանատու Զենի Բոլինգը:

Երկօրյա կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին մարզերում հաշմանդամների իրավունքների իրականացման մոնիտորինգի և կլոր սեղանների արդյունքները (տե ս հավելված 1), ինչպես նաև «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Քննարկվեց վերոնշյալ օրենսդրական նախագիծը: Այն արժանացավ համընդհանուր հավանության, եղան արժեքավոր առաջարկություններ, որոնք նախագծի վերամշակման ժամանակ ընդգրկվեցին վերջնական տարբերակի մեջ:

Որպես այս ծրագրով նախատեսված համազգային գործողությունների կյանքի կոչման առաջին քայլ, կոնֆերանսի մասնակիցները ուղերձով դիմեցին ՀՀ Նախագահին, ՀՀ Վարչապետին և ՀՀ ԱԺ Նախագահին հետևյալ առաջարկությամբ.

Սպորտային ոլորտի օջախների վերանորոգման աշխատանքները իրականացնելիս հաշվի առնել և իրականացնել ֆիզիկական սահմանափակումներ ունեցող մարդկանց համար նախատեսված քաղաքաշինական միջազգային նորմերը՝ հասարակության բոլոր անդամների համար հավասար ֆիզիկական մատչելիություն ապահովելու նպատակով:

Գոհունակությամբ նշում ենք, որ ստացվել է հարցի դրական լուծումը հավաստող պատասխան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքային գործունեությունը համակարգող նախարար Հ.Աբրահամյանից



(տե՛ս նկար 3):

Կոնֆերանսի ընթացքում ընդլայնվեց աշխատանքային խումբը: Պատվիրակների համատեղ աշխատանքի արդյունքում վերամշակվեց «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (տե՛ս հավելված 2) և ներկայացվեց ԱԺ: Փորձագետների կողմից վերանայելուց հետո այն կորվի շրջանառության մեջ: Համազգային մասշտաբով իրականացված «Հավասար իրավունքներից՝ հավասար հնարավորություններ» ծրագրի արդյունքում մշակվեց նաև 2006-2010թթ. Հաշմանդամության հետևանքների հաղթահարման գործողությունների ազգային ծրագիր (ՀՀՀԳԱԾ): ՀՀՀԳԱԾ-ում ամփոփվել են ուսումնասիրված միջազգային չափանիշները և առաջադեմ փորձը, Երևանում և մարզերում կայացած կլոր սեղանների, կոնֆերանսի մասնակիցների առաջարկությունները, ինչպես նաև մոնիտորինգի արդյունքները:

ՀԱՇՄԱՆՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀՊԹՈՎՆՊՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՊՈՏՄԱՆԵՐԸ

- Հայաստանում հաշմանդամության բնագավառում եվրոպական չափանիշներին համապատասխան՝ հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղվածությունների ամրագրում, որը կապահովի այդ բնագավառում վարվող քաղաքականության մշակում և ռեսուրսների արդյունավետ օգտագործում
- Իրականացված հետազոտությունների արդյունքում այն առաջնահերթությունների հաստատում, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր հաշմանդամ քաղաքացու կյանքի որակի բարձրացման համար, և դրանց աստիճանական իրագործում
- Սոցիալական հասարակության կառուցում
- Տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք մասնակցություն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում
- Հավասար հնարավորությունների ապահովում հաշմանդամների և ոչ հաշմանդամների համար՝ անկախ սեռից, տարիքից, ազգությունից, դավանանքից և այլ գործոններից
- Հաշմանդամների նկատմամբ խտրականության կանխարգելում և պայքար խտրականության ցանկացած դրսևորումների դեմ
- Անկախ կյանք վարելու հնարավորության ընձեռում հաշմանդամների

համար

- Հաշմանդամության կանխարգելում և մակարդակի նվազեցում
- Հասարակության բոլոր խավերի իրազեկության բարձրացում հաշմանդամների՝ այլոց հետ հավասար իրավունքների և պարտականությունների վերաբերյալ

ՀՀՀԳԱԾ-ն ընդգրկում է հետևյալ ոլորտները. առողջապահություն և վերականգնում, մատչելիություն, կրթություն, զբաղվածություն, մշակույթ, սպորտ, հասարակայնության վերաբերմունք և իրազեկություն:

Յուրաքանչյուր ոլորտում նախատեսվող գործողությունների պլանը և իրականացնող հաստատությունները նախորդվում են տվյալ ոլորտում տիրող իրավիճակի համառոտ նկարագրությամբ: Ակնկալվում է, որ ռազմավարական բնույթ ունեցող ՀՀՀԳԱԾ-ի հիման վրա մարզերի համապատասխան պետական կառույցները և ՀԿ-ները կմշակեն յուրաքանչյուր մարզի զարգացման կոնկրետ գործողությունների պլան, որը կընդգրկվի տվյալ մարզի 2006-2010թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում:

Առողջապահություն և սեռական գտնու

Առողջապահությունը թերևս այն բնագավառն է, որի օգնության կարիքը հաշմանդամ մարդիկ առաջին հերթին են զգում և որի հետ ամենից շատ են առնչվում ամբողջ կյանքի ընթացքում: Բժշկական օգնության և սպասարկման ոլորտը տարիներ շարունակ եղել է հաշմանդամների հիմնահարցերի կարգավորման առաջատար ուղղությունը: Հաշմանդամները ամենից շատ հաճախում են բուժ-վերականգնողական հիմնարկներ, հետևաբար այդ շինությունների շենքային պայմանները պետք է աստիճանաբար մատչելի դառնան տեղաշարժման սահմանափակումներ ունեցող մարդկանց համար, իսկ նրանցում իրականացվող անվճար սպասարկման ծավալը և որակը, որոնք մեծապես պայմանավորված են երկրի տնտեսական զարգացման աստիճանով, պետք է հնարավորինս դրական տեղաշարժ ունենան:

Շատ կարևոր է հիվանդությունների վաղ հայտնաբերումը, վաղ միջամտությունը, նորածինների սկրինինգ հետազոտությունները և աբիլիտացիայի գործընթացը անմիջապես ծնվելուց հետո, որի արդյունքում կկանխվի հաշմանդամությունը կամ նրա խորացումը:

Ըստ ծրագրի ընթացքում իրականացված մոնիտորինգի արդյունքների՝ Երևանի և մարզերի հարցման ենթարկված թվով

55 բուժվերականգնողական հաստատություններում առկա են այն մասնագետները և միջոցները, որոնք համապատասխանում են հաստատության կոչմանը: Միաժամանակ նշվել է ֆինանսական և տեխնիկական միջոցների անհրաժեշտությունը հատկապես բուժվերականգնողական հիմնարկների համար: 32 հաստատություն նշել են, որ հաշմանդամների համար հատուկ լրացուցիչ միջոցներ չունեն: 6 հաստատություն օժտված են հատուկ սարքավորումներով, Եղվարդի և Հրազդանի հիվանդանոցները նշել են սայլակների առկայությունը: Տեխնիկական միջոցների ու կատարվող միջոցառումների բազմազանությամբ հատկապես աչքի է ընկնում Երևանի կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտը: Հայկական Կարմիր խաչի ընկերության Միջազգային հետմասվածքային վերականգնողական կենտրոնը, թերևս, Հայաստանում սայլակավոր հաշմանդամների համար լիովին մատչելի միակ վերականգնողական հաստատությունն է:

Հարկ է նշել, որ վերականգնողական աշխատանքների մասին են նշել ուսումնասիրված հաստատություններից միայն իննը, մասնավորապես Վանաձորի «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկական, Սպիտակի վերականգնողական կենտրոնը, Ախուրյանի, Իջևանի, Սևանի, Կապանի և Գավառի պոլիկլինիկաները, Գավառի հիվանդանոցը և Երևանի հանրապետական հիվանդանոցը: Որպես առողջապահության համակարգի առանցքային գործառույթն իրականացնող առողջության առաջնային պահպանման օղակ, կարևոր է պոլիկլինիկաների դերը հաշմանդամների համար տեղերում բուժ. սպասարկում տրամադրելու գործում: Ոլորտում իրականացվող բարեփոխումների և ֆինանսավորման շարունակական աճի արդյունքում ակնկալվում է, որ հնարավորություն կընձեռնվի այս բուժ. հիմնարկներին դարձնել մատչելի բոլոր հաշմանդամների համար թե՛ պոլիկլինիկաների շենքերը, թե՛ մատուցվող բուժ. ծառայությունները:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Առողջապահության ոլորտում հաշմանդամների իրավունքների, գոյություն ունեցող օրենսդրության մասին բուկլետների հրապարակում (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ և ՀԿ-ներ)
- Հիվանդությունների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության անհրաժեշտության մասին բուկլետների հրապարակում բժիշկների համար (Առողջապահության նախարարություն, բուժ. հիմնարկներ)
- Զանազան հիվանդությունների վաղ հայտնաբերման և վաղ

միջամտության անհրաժեշտության մասին բուկլետների հրապարակում բնակչության համար (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ և ՀԿ-ներ)

- Բնակչության իրազեկում ԲՍՓՀ ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ)
- Հաշմանդամների խնամքի վերաբերյալ առանձին դասընթացների կազմակերպում (բուժ. հիմնարկներ, ՀԿ-ներ)
- «Առողջ կենսակերպ» կարգախոսի իրականացում՝ ակոհոլի, ծխախոտի և թմրամոլության դեմ պայքարի միջոցառումների մշակում (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ և ՀԿ-ներ)
- Հաշմանդամության կանխարգելմանը նպաստող՝ զանազան հիվանդությունների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության ծրագրերի իրականացում Երևանում և մարզերում (Առողջապահության նախարարություն և բուժ. հիմնարկներ, միջազգային կազմակերպություններ)
- Հիվանդությունների վաղ հայտնաբերումն իրականացնող համապատասխան մասնագետների վերապատրաստում (Առողջապահության նախարարություն և բուժ. հիմնարկներ, միջազգային կազմակերպություններ)
- Հետազոտողների շարժական խմբերի ստեղծում՝ արատների վաղ հայտնաբերման և վաղ միջամտության կազմակերպման համար (Առողջապահության նախարարություն և բուժ. հիմնարկներ, միջազգային կազմակերպություններ)
- Ընտանեկան բժշկի ինստիտուտի կայացման նպաստում, 2010թ. վերջում յուրաքանչյուր ընտանիք ընտանեկան բժիշկով ապահովում (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ, բուժ. հիմնարկներ)
- Երևանում և մարզերում գործող առողջապահության հաստատությունների մատչելիության ապահովում, առաջնահերթ կարգով հարմարեցման ենթակա հաստատությունների ցանկի մշակում և համապատասխան վերակառուցողական աշխատանքների իրականացում, առաջիկա տարիներին վերանորոգվելիք հաստատությունների մատչելիության ապահովում (Աժ, Կառավարություն, Առողջապահության նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը)

- Յուրաքանչյուր մարզի ամեն քաղաքում և Երևանի բոլոր համայնքներում մեկական՝ հաշմանդամների համար լրացուցիչ միջոցներով հագեցած, անարգել պոլիկլինիկայի առկայություն (Առողջապահության նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, ՏԻՄ-եր)
- Նոր կառուցվող և վերակառուցվող առողջապահության օբյեկտների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Առողջապահության նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ)
- Յուրաքանչյուր մարզում հաշմանդամների կարիքներին համապատասխանող շենքային արտաքին և ներքին կառույցների մատչելիությամբ ապահովված, հաշմանդամների համար լրացուցիչ միջոցներով հագեցած վերականգնողական և ցերեկային կենտրոնների կառուցում՝ նկատի ունենալով նրանց տեղադրության վայրի ընտրությունը (հնարավորինս մոտ) (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ և բուժ. հիմնարկներ, միջազգային կազմակերպություններ)
- Հաշմանդամ մարդկանց համար հոգեբանական և վերականգնողական ծառայությունների ընդլայնում (Առողջապահության նախարարություն, մարզերի առողջապահության բաժիններ, ՀԿ-ներ)
- ԲՍՓՀ աշխատանքներում ՀԿ-ների ներկայացուցիչների ընդգրկում (Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԲՍՓՀ գործակալություն, ՀԿ-ներ)
- Բուժ.-առողջարանային աջակցության ծավալների մեծացում հաշմանդամների համար (Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)
- Հաշմանդամներին մատուցվող առողջապահական ծառայությունների ծավալի և որակի մեծացում՝ բժշկական սպասարկման պետ. պատվերի սահմանների ընդլայնում, անվճար դեղորայքի տրամադրում (Առողջապահության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի առողջապահության և սոցիալական բաժիններ)

ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

«Մատչելի» կամ «անարգել միջավայր» տերմինը կիրառվում է շրջակա միջավայրի մասին խոսելիս, որտեղ կարող են ազատ մուտք գործել և տարբեր տեսակի գործունեություն իրականացնել

Ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող մարդիկ: Սկզբնական շրջանում այդ արտահայտությունը օգտագործվում էր շենքերի և սարքավորումների նկարագրման համար, որոնցից կարող էին օգտվել սայլակավոր մարդիկ: Սակայն հետագայում այդ տերմինի բնորոշման մեջ ընդգրկվեցին այնպիսի չափանիշներ, որոնց կիրառումը հարմար է նաև հաշմանդամության այլ ձևեր ունեցող մարդկանց համար: Լայն իմաստով, անարգել կամ մատչելի դիզայնը այն ձևավորումն է, որը ստեղծում է առավել հեշտ և անվտանգ պայմաններ հնարավորինս շատ թվով մարդկանց համար ու նպաստում է նրանց անկախ կենսաձևի զարգացմանը: Բնակչության առավել դժվար տեղաշարժվող խմբերի թվին դասվում են հենաշարժողական ապարատի վնասվածք ունեցող հաշմանդամները (ներառյալ նաև անվաթոռ օգտագործողները), տեսողության և լսողության խախտումներով հաշմանդամները, տարեց մարդիկ (60 տարեկան և ավելի), ժամանակավորապես անաշխատունակները, հղի կանայք, մանկասայլակներով մարդիկ, նախադպրոցական տարիքի երեխաները: Ինչպես տեսնում ենք, բնակչության դժվար տեղաշարժվող խմբերի թվին, հաշմանդամներից բացի, դասվում են նաև բազմաթիվ այլ սոցիալական խմբեր: Հարկ է նշել, որ այն, ինչ արվում է հաշմանդամների հարմարության համար, շատ հարմար կլինի բոլոր մարդկանց համար, նույնիսկ եթե նրանք չունեն ֆիզիկական սահմանափակումներ:

Գոյություն ունեն ֆիզիկական և զգայական սահմանափակումների տարբեր տիպեր և, բնական է, կան նաև շրջակա միջավայրի հարմարեցման տարբեր պահանջներ: Ենթակառուցվածքների զգալի փոփոխություններ են պահանջվում հենաշարժողական ապարատի, տեսողության և լսողության լուրջ շեղումներ ունեցող մարդկանց լիարժեք կյանքի համար:

*ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ԵՆԱՎԵՐԺՈՂԱԿԱՆ ՈՒՆԳՎԵՐՈՒՄՆԵՐՈՎ
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

Հայաստանի կրթական և մշակութային հաստատությունների, հիմնարկ-ծեռնարկությունների ու բուժվերականգնողական հաս-տատությունների ֆիզիկական անմատչելիությունը լուրջ խնդիրներ է առաջացնում հենաշարժողական ապարատի խանգարումներ ունեցող մարդկանց համար: Ամենանշանակալի խոչընդոտներից են աստիճանները, որոնք առկա են հաստատությունների մեծամասնության մուտքի մոտ: Այդ աստիճանների մի մասը զուգակցված է թեքահարթակով, իսկ մեծ մասի դեպքում հնարավոր է թեքահարթակ կառուցել:

Ենթի մուտքը նույնպես դժվար խնդիր է հանդիսանում մատչելիության

տեսանկյունից: Շինությունների 81 տոկոսի մուտքը աստիճաններով է նախորդվում, և դրանց միայն 8 տոկոսն է, որ թեքահարթակ ունի, իսկ մնացած շինությունների 72 տոկոսի դեպքում թեքահարթակ կառուցելու հնարավորություն կա: Հարկ է նշել, որ շենքերի սանդուղքները հիմնականում չունեն բազրիք, որը ևս կարևոր պարագա է ոչ միայն սայլակներով տեղաշարժվող, այլև երեխաների, հեռակներով, թույլ և ծեր մարդկանց բարձրանալու համար:

Հաջորդ գործոնը, որ կարևոր է մատչելիության տեսանկյունից, մուտքի դռներն են: Որոշ հաստատություններ ունեն 80սմ-ից նեղ դռներ, ինչը դժվարանցանելի է դարձնում մուտքը սայլակով տեղաշարժվողների համար: Բացի այդ, հաստատություններից շատերը ունեն բարձր շեն, որը թերևս շատերի համար աննկատելի, բայց ևս այնպես լրացուցիչ խոչընդոտ է սայլակի համար:

Ինչ վերաբերում է շենքի ներսում տիրող իրավիճակին, ապա հիմնական խոչընդոտ են հանդիսանում աստիճանները, որոշ դեպքերում նաև՝ շեները և միջանցքի նեղ լինելը:

Շինությունների մեծ մասը վերելակ չունի. այն առկա է հիմնականում բուժվերականգնողական հաստատություններում, մասնավորապես հիվանդանոցներում, որտեղ վերելակի լայնությունը մեծ մասամբ համապատասխանում է չափանիշներին: Առանձին ուսումնասիրման առարկա պետք է դառնան նաև սենյակների ու սանհանգույցների դռները, որոնք հաճախ չեն համապատասխանում ընդունելի լայնությանը՝ 80 սմ և ավելի:

Անդրադառնալով իրավիճակի բարելավման հնարավորություններին՝ նշենք, որ բազմաթիվ հաստատություններ մատչելի կարող են դառնալ մուտքի մոտ և շենքի ներսում թեքահարթակի կառուցման դեպքում: Հարկավոր է նաև չեզոքացնել մուտքի մոտ առկա շեները: Եվ վերջապես, անհրաժեշտ է լայնացնել սենյակների ու սանհանգույցների դռները՝ անվասայլակով հաշմանդամների համար շինությունները մատչելի դարձնելու համար: Ըստ





իրականացված հետազոտության տվյալների՝ նման միջոցառումները կարող են մատչելի դարձնել մշակութային, կրթական հիմնարկներին,

բուժհաստատությունների ու ձեռնարկությունների ավելի քան մեկ երրորդը:

Անմխիթար է իրավիճակը հասարակական տրանսպորտի ոլորտում: Հայաստանում մատչելի քաղաքային տրանսպորտը ամբողջովին բացակայում է: Ինչ վերաբերվում է տաքսիին, ապա նույնիսկ այդ թանկարժեք փոխադրամիջոցը ոչ միշտ է հասանելի անվասայլակով հաշմանդամին այն պարզ պատճառով, որ մեքենաների բեռնախցիկում գրեթե միշտ առկա է հեղուկ գազի բալոնը, որի պատճառով սայլակն այնտեղ կհսով չափ է տեղավորվում, և վարորդներն ստիպված են երթևեկել կիսաբաց բեռնախցիկով (տե՛ս նկար 5): Որոշ վարորդներ հրաժարվում են սպասարկել հաշմանդամներին՝ այսպիսով դրսևորելով խտրականություն նրանց հանդեպ:

2003 թվականին «Ունիսոն» ՀԿ-ի կողմից իրականացված՝ Երևանի բոլոր ընտրատեղամասերի ֆիզիկական մատչելիության մոնիտորինգի արդյունքում պարզվեց, որ մայրաքաղաքի 423 ընտրատեղամասերից միայն 10-ն են լիովին մատչելի սայլակավոր հաշմանդամների համար: Այսպիսով, հենաշարժողական խնդիրներ ունեցող ոչ բոլոր քաղաքացիներն են կարողանում իրականացնել իրենց ընտրական իրավունքը:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Մշակել և ընդունել հաշմանդամների և այլ դժվարաշարժ մարդկանց համար անարգել միջավայրի ստեղծման մասին օրենք (Աժ, Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, ՀԿ-ներ)

- Ապահովել բոլոր նոր կառուցվող և վերակառուցվող օբյեկտների մատչելիությունը հաշմանդամների (այդ թվում՝ սայլակ օգտագործող մարդկանց) համար և մտցնել համապատասխան հստակեցում քաղաքաշինության մասին օրենքում (ԱԺ, Կառավարություն, Քաղաքաշինության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ)
- Նոր կառուցվող և վերակառուցվող հաստատությունների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Մշակել գործող հաստատությունների ցանկը, որոնք ենթակա են վերակառուցման առաջնահերթ կարգով, հաշվի առնելով տվյալ հաստատության հասարակական նշանակությունը և մատչելի դարձնելու իրական հնարավորությունը (ՀԿ-ներ, Քաղաքաշինության նախարարություն)
- Ապահովել ընտրատարածքների մատչելիությունը սայլակից օգտվող հաշմանդամների համար, իսկ մինչև հարցի հիմնավոր լուծումը, որպես ժամանակավոր միջոց՝ վերականգնել շրջիկ քվեատուփերի կիրառությունը (ԱԺ, Կառավարություն, ՏԻՄ-եր)
- Ապահովել Երևանում և մարզկենտրոններում քաղաքային տրանսպորտի յուրաքանչյուր երթուղում առնվազն 1 մատչելի փոխադրամիջոցի առկայություն (Տրանսպորտի և կապի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Օրեկան առնվազն 2 անգամ անվճար ցուցադրել Հանրային հեռուստատեսության եթերում հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ների պատրաստած՝ մատչելի միջավայր ստեղծելու գաղափարը քարոզող սոցիալական տեսահոլովակներ (Կառավարություն, Հանրային հեռուստաընկերություն, ՀԿ-ներ)
- Անվճար տեղադրել Երևանի կենտրոնական փողոցներից մեկում ՀԿ-ների կողմից պատրաստած՝ մատչելի միջավայր ստեղծելու գաղափարը քարոզող մեծ (6x3մ) գովազդային պաստառ (Երևանի քաղաքապետարան, Կենտրոն կամ Արաբկիր համայնքի թաղապետարան, ՀԿ-ներ)

*Տեղեկատվական մատչելիության առաջնություն
յուրությունը բնագործները ունենող մարդկանց Համար,
որոնք բնակող տները ջր շարժան*

Չի իրականացվում լսողության խանգարումներ ունեցող մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը: 2004թ. հունվարին ՀՀ Նախա-

գահը վավերացրել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը նախատեսում է հեռուստատեսության տարբեր ալիքներով օրվա եթերաժամում առնվազն մեկական լրատվական և մանկական հեռուստահաղորդում հեռարձակել սուրդոթարգմանությամբ կամ հայերեն լուսագրով: Սուրդոթարգմանություն առայժմ լայնորեն կիրառվում է միայն ԱԼՍ հեռուստաալիքով: Հեռուստատեսության և Ռադիոյի Ազգային Հանձնաժողովի նախագահի հետ համագործակցության արդյունքում առկա է պատրաստականություն «Շողակաթ», «Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Արմենիա TV», «Շանթ», «Կենտրոն», «ԱրմենԱկոր» հեռուստաընկերությունների կողմից յուրաքանչյուր ալիքով սուրդոթարգմանությամբ հաղորդումներ հեռարձակելու վերաբերյալ: Ներկայումս Հ1-ով իրականացվող լուսագրով տարբերակը մատչելի չէ այս խումբ մարդկանց համար, քանի որ նրանց մեծ մասը տառաձանաչ չէ, իսկ գրագետ մարդկանց համար էլ վազող լուսագրի ընթերցման և ըմբռնման համատեղումը պատկերի ընկալման հետ բավականին դժվար է:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Հանրային հեռուստատեսությամբ, որը սիռվում է ՀՀ ողջ տարածքով, լուսատողը փոխարինել սուրդոթարգմանությամբ (Հանրային հեռուստաընկերություն, «Հավատ», «Կամք և Կորով» և «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ներ)
- Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ այլ հեռուստաալիքներով սուրդոթարգմանության կիրառում (Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, «Հավատ», «Կամք և Կորով» և «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ներ, թիվ 9, 15 լսողության խանգարումներով երեխաների հատուկ դպրոցներ)

*ՄԱՏՁԵՂՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՆՎՈՒՄ ՏԵՍՏՊՈՒԹՅԱՆ
ՈՒՆԱԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՄԱՊՊՈՒՆՏ ՀԱՄԱՐ*

Հաշվի առնելով այն փաստը, որ հիմնական ինֆորմացիան մարդն թերթի վրա ստանում է մեծ մասով կատարվող լրատվական ալիքների միջոցով, որոնցում ղեկավարվելով հիմնականում լրատվական թրեյդինգը հարցնապատկերային լրիս (ռեյինֆային ուղեցուցիչներ, ծայնային ազդանշանով լուսաֆորներ և այլն): Շատ հաճախ այս ամենի բացակայության պատճառով լուրջ վտանգի է ենթարկվում չտեսնող մարդու կյանքը: Գրեթե բոլոր այս խնդիրները կարելի է լուծել, ապահովելով անհրաժեշտ հատուկ պայմաններ՝ դրանով

գոնե որոշ չափով կոմպենսացնելով նման մարդկանց տեսողության բացակայության գործոնը:

Կրթության և զբաղվածության ոլորտներում կույր մարդկանց վիճակի բարելավման գործում կարևոր դեր կարող են խաղալ ժամանակակից սարքավորումները: Հատկանշական է, որ վերջերս Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում կույր և թույլ տեսնող մարդկանց համար մշակվեց «Արև» համակարգչային համակարգը: Վերոնշյալ համակարգը ունի ծայնային վերարտադրման հնարավորություն, որը թույլ է տալիս համակարգչի միջոցով օգտագործողի կողմից ընտրված ցանկացած ինֆորմացիա մատչելի դարձնել տեսողության խանգարումներով մարդկանց համար:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Բրայլի այբուբենով գրականությանը զուգահեռ՝ տարեցտարի «Արև» նորաստեղծ համակարգչային համակարգի կիրառման ընդլայնում դպրոցներում, ԲՈՒՀ-երում, աշխատատեղերում, որտեղ կան տեսողության խանգարումներով հաշմանդամներ (Կրթության և գիտության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀԿ-ներ, Կույրերի հանրապետական միավորում)
- Ձայնային ազդանշանների և ռելիեֆային ուղեցուցիչների տեղադրում մարզկենտրոնների և Երևանի կենտրոնական փողոցներում՝ կույր մարդկանց անվտանգ և ինքնուրույն տեղաշարժը հնարավոր դարձնելու համար (Քաղաքաշինության նախարարություն, Տրանսպորտի և կապի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, Կույրերի հանրապետական միավորում)
- Առնվազն 1 օրաթերթի ծայնագրում տեսաերիզներով (Տրանսպորտի և կապի նախարարություն, օրաթերթերի խմբագրություններ, ՀԿ-ներ)

Կրթություն

Կրթությունը ոչ միայն որոշակի մակարդակի գիտելիքներ ստանալու միջոց է, այլև սոցիալական և անհատական զարգացման վճռիչ գործոն: 1948թ. Սարգոս Իրավունքների Հռչակագիրը հաստատեց դրույթ, որ կրթությունը մարդու հիմնական իրավունքն է, որը հետագայում ամրագրվեց ՄԱԿ-ի Երեխայի Իրավունքների մասին Կոնվենցիայով

(1989թ.): Հարցը հատկապես կարևորվում է հաշմանդամ երեխաների պարագայում, քանի որ կրթական հատուկ կարիքներ ունեցող յուրաքանչյուր երեխայի կրթությունը շաղկապված է դժվարություններով: Մյուս կողմից, վաղ հասակից կրթությունը, մասնագիտական կողմնորոշումը ստեղծելու են նախադրյալներ նրա ինքնուրույն և անկախ ապագայի, անձի արժեքորման համար:

Կրթության ոլորտում հիմնական ուղղությունը ինտեգրման քաղաքականության զարգացումն է, այսինքն այլոց հետ հավասար պայմաններում կամ սովորական կրթական հաստատություններում հաշմանդամների կրթության ապահովումը: Հարկ է նշել, որ տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներում, ինչպիսին են Բրիտանիան և Շվեդիան, դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված են ֆինանսական ռեսուրսների սակավությամբ և որոշակի հիվանդությունների դեպքում գործնականում ինտեգրման ապահովման անհնարինությամբ: Նշված երկրներում բարձրացված որոշ խնդիրներ կարող են զարմանք (նաև՝ բարի նախանձի զգացմունք) առաջացնել մեզ մոտ: Օրինակ՝ Շվեդիայում հաշմանդամների 1/6-րդը սովորում է ԲՈՒՀ-երում (մյուսների՝ 1/4-րդը), որը համարվում է անբավարար ցուցանիշ և խտրականության դրսևորում:

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է իրականացնում է ներառական կրթության աստիճանական ներդրման և զարգացման քաղաքականություն: Պետական մակարդակով ոլորտում իրականացվում են կրթական բարեփոխումներ:

Կրթական հաստատությունների ղեկավարների հարցումից պարզվեց, որ ուսումնասիրված հաստատությունների մեծ մասն են հաճախում հաշմանդամներ, որոնց տրամադրվում է բազմատեսակ աջակցություն: Կրթական հաստատություններում մշակվում է հատուկ մեթոդիկա, տրամադրվում են մասնագետներ՝ տնային ուսուցման համար և մասնագիտական աջակցության նպատակով: Հաստատություններից շատերը նշեցին նյութական օգնությունը՝ հիմնականում գրեմական պիտույքների, հագուստի տեսքով, որոշ դպրոցներում իրականացվում է բուժական ֆիզկուլտուրա, իսկ միջնակարգ մասնագիտական ու բարձրագույն հաստատությունները կիրառում են վարձավճարի զեղչ կամ ընդհանրապես վճար չեն գանձում հաշմանդամ ուսանողներից: Արարատի տեխնիկումում կառուցվել է թեքահարթակ, իսկ Գավառի պետական համալսարանը տրամադրում է ավտոմեքենա՝ հաշմանդամներին տեղափոխելու համար:

Հաշմանդամների կարիքների համար անհրաժեշտ մասնագետներից ուսումնական հաստատություններում առկա են հոգեբանի, իսկ որոշ հաստատություններում՝ սուրդոմանկավարժի և լոգոպեդի հաստիքները: Ընդ որում, սուրդոմանկավարժը առկա է հիմնականում միջնակարգ և

հատուկ դպրոցներում, իսկ լոգոպեդը՝ նաև մանկապարտեզներում: Բազմաթիվ դպրոցներ նշել են հոգեբանի, սոցիալական աշխատողի և լոգոպեդի, ինչպես նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ աշխատելու համար հատուկ մանկավարժների կարիքը: Հաշմանդամների հաճախման կարևոր խոչընդոտ է համարվում նաև հեռաշարժողական խնդիր ունեցող հաշմանդամների մուտքի համար անհրաժեշտ



շենքային պայմանների բացակայությունը: Մի շարք կրթական հաստատությունների ներկայացուցիչներ նշել են, որ ակնկալում են հաստատության վերանորոգում, որի շնորհիվ շենքը ավելի մատչելի կդառնա հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Խոչընդոտների շարքում հաճախ նշվում է նաև անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությունը:

Հաշմանդամների ծնողների հետ տարվող թիմային աշխատանքի գաղափարին ծանոթ են բազմաթիվ կրթական հաստատություններ, սակայն քչերի կողմից է նման աշխատանք տարվում:

Մարզերում կազմակերպված կլոր սեղանների մասնակիցները մի շարք միջոցառումներ են թվարկել, որոնք անհրաժեշտ են նախադպրոցական ուսուցման բնագավառում հաշմանդամների համար հատուկ մասնագիտացած մանկապարտեզի, մանկապարտեզում առանձին խմբի առկայություն, ցերեկային կենտրոնի ստեղծում: Դպրոցական կրթության առումով նշվել է ուսուցիչների վերապատրաստման ու հատուկ մասնագետների ապահովման խնդիրը: Ընդհանրապես, կրթության ապահովման խնդիրը համարվել է հաշմանդամների առաջնահերթ խնդիրներից մեկը:

ՀՀ-ում կրթության, զբաղվածության ոլորտներում հաշմանդամներին հավասար հնարավորությունների ապահովման պատկերը ստանալու համար «Հավատ» ՀԿ կողմից 2003թ. իրականացվել է սոց. հարցում 1200 հաշմանդամների մեջ Երևանում և մարզերում (Լոռի, Արմավիր, Տավուշ, Սյունիք): Հանրապետությունում բնակչության կրթական մակարդակի

հետ համեմատած (99 տոկոսանոց գրագիտություն)՝ ակնառու է հետազոտված հաշմանդամների համար կրթության ոլորտում ոչ հավասար հնարավորությունների փաստը: Կրթության մատչելիության ապահովման հիմնական բեռը կրում են հաշմանդամները և նրանց ընտանիքները: Պարզվեց, որ կրթությունը ավելի մատչելի է 3-րդ խմբի հաշմանդամների համար, քան 1 և 2-րդ խմբերի, բացի այդ, մանկուց հաշմանդամների մեջ բարձր է կրթությունը չունեցող հաշմանդամների միջին տեսակարար կշիռը, որը պայմանավորված է նաև մարզերում հատուկ դպրոցների բացակայությամբ: Հետազոտված հաշմանդամների 3,9%-ը չունի կրթություն, մեծ մասի կրթությունը միջնակարգ է՝ 42,9% կամ միջին մասնագիտական՝ 17,9%, և շատ քիչ մասն է ստացել բարձրագույն կրթություն՝ 15,6%: Սովորել ցանկացողներին խանգարող հանգամանք է սոցիալական վիճակը. կարիքավորությունը՝ 46,6% (գրեմական պիտույքներ, հագուստ), 33,3 տոկոսին խանգարում է լսողական սարքերի, պրոթեզների, թեքահարթակների բացակայությունը, մյուս մասին՝ հիվանդությունները (անկողնային վիճակը, մտավոր սահմանափակ կարողությունները):

Կրթական ոլորտում առանձնահատուկ ուշադրության են արժանի հատուկ դպրոցները: ՀՀ-ում գործում են 53 գիշերօթիկ դպրոցներ, որոնցից 38-ը նախատեսված են ֆիզիկական և մտավոր շեղումներ ունեցող երեխաների համար: Այդ դպրոցներից 18-ը գտնվում են Կրթության և գիտության նախարարության, իսկ մնացածները՝ Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների ենթակայության տակ: Վերոնշյալ դպրոցներում սովորում է 11500, գիշերում՝ մոտ 4000 երեխա: Հայտնի է, որ այդ դպրոցների կոնտինգենտը հաճախ չի համապատասխանում դպրոցի ուղղվածությանը, որի հետևանքով ապարդյուն է անցնում երեխայի ուսումնառության շրջանը, դպրոցները ուղղակի վերածվում են սոցիալական ապաստանների, իսկ հատուկ դպրոցների սաները դուրս են մնում կրթությունից:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Հաշմանդամների կրթական իրավունքների մասին բուկլետների հրատարակում (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ և ՀԿ-ներ)
- Ներառական կրթության քաղաքականության և կրթական բարեփոխումների վերաբերյալ հաստատված օրենսդրական ակտերի մարտնչական կրթություն հրատարակում (Ծննդաբերության կրթության, միջին մասնագիտական կրթական համակարգի, ԲՈՒՀ-ական և հետբուհական կրթական բարեփոխումների մասին) (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ և

ՀԿ-ներ)

- Հաշմանդամ մարդկանց բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ստանալու գործընթացում առկա արտոնությունների իրազեկում (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ և ՀԿ-ներ)
- ԲՈՒՀ-երում համապատասխան մասնագետների պատրաստում (ռեաբիլիտոլոգներ, աուդիոմետրիստներ, սուրդոմանկավարժներ, տիֆլոմանկավարժներ, տիֆլոսուրդոմանկավարժներ, հոգեբաններ, սոցիոլոգներ, սոց. աշխատողներ, օկուպացիոն թերապիստներ), վերապատրաստման կուրսերի կազմակերպում (Կրթության և գիտության նախարարություն, ԲՈՒՀ-եր)
- Հատուկ դպրոցների տարրական դասարանների սաների խմբային բժշկա-մանկավարժական հետազոտում՝ դպրոցի ուղղվածությամբ նրանց կարիքներին չհամապատասխանելու դեպքում այլ կրթական հաստատություններ ուղեգրելու նպատակով (Կրթության և գիտության նախարարություն՝ Առողջապահության նախարարության հետ համատեղ, հատուկ դպրոցներ)
- Կրթությունից դուրս մնացած երեխաների և երիտասարդների հայտնաբերում, նրանց ըստ կրթության կարիքների դասակարգում (ՀԿ-ներ, համայնքներ, մարզերի կրթության բաժիններ)
- Կրթությունից դուրս մնացած երեխաների նպատակային կրթական կարճաժամկետ դասընթացների կազմակերպում (Կրթության և գիտության նախարարություն՝ ՀԿ-ների և համայնքային կենտրոնների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ)
 - ✓ բանավոր խոսք չունեցող խուլ երեխաների և նրանց ընտանիքների անդամների ուսուցումը ժեստերի լեզվին (օրինակ՝ Գյումրիի թվով 40 տարբեր տարիքի խուլ մարդկանց համար)
 - ✓ կույր երեխաներին Բրայլի այբուբենի ուսուցում, կրթության մեջ «Արև» համակարգի աստիճանական ներդրում
 - ✓ ցերեկային (կարիքի դեպքում նաև՝ գիշերային) խնամքի կենտրոնների ստեղծում թեթև արտահայտվածությամբ մտավոր հետամնաց երեխաների համար՝ նրանց կարողություններին համապատասխան ուսումնական ծրագրերի առկայությամբ
 - ✓ ՀԿ-ների բազայի հիման վրա ծնողական դպրոցի, նրանց փոխօգնության խմբերի ստեղծում
 - ✓ կարճաժամկետ կրթական ծրագրերի մշակում կրթությունից դուրս մնացած երեխաների և երիտասարդների

համար

- ✓ յուրաքանչյուր մարզում կարճաժամկետ նպատակային ուսուցումների կազմակերպում թերի կրթություն ունեցող հաշմանդամների համար

- Հատուկ կարիքներով երեխաների հետ աշխատող մասնագետների համար հայերեն լեզվով մեթոդական նյութերի մշակում (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ)
- Հատուկ կարիքներով երեխաների տնային ուսուցման հատուկ ծրագրերի մշակում (Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ)
- Նախադպրոցական մանկական հաստատությունների ստեղծում կրթական հատուկ կարիքներ ունեցող երեխաների ընդգրկմամբ այլ երեխաների հետ միասին և դրանցում համապատասխան մասնագետների (սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ և այլն) առկայության ապահովում (Կրթության և գիտության նախարարություն, համայնքներ, մարզերի կրթության բաժիններ)
- Յուրաքանչյուր մարզում ներառական և հատուկ դպրոցի առկայություն (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ)
- Ներառական և հատուկ դպրոցներում թիմային աշխատանքի կազմակերպում բոլոր անհրաժեշտ մասնագետների (սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, սոց. աշխատող, հոգեբան) առկայությամբ և ծնողի մասնակցությամբ (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ, դպրոցներ)
- Անհրաժեշտության դեպքում դպրոցներում հայերեն ժեստերի լեզվի կիրառում (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ, դպրոցներ, ՀԿ-ներ)
- Հատուկ կարիքներով երեխաների զարգացման և կրթական համայնքային կենտրոնների ստեղծում Երևանում և մարզերում (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ, միջազգային կազմակերպություններ, մասնավոր հիմնադրամներ, ՀԿ-ներ)
- Երևանում և մարզերում գործող ուսումնական հաստատությունների մատչելիության աստիճանական ապահովում, առաջնահերթ կարգով հարմարեցման ենթակա հաստատությունների ցանկի մշակում և համապատասխան վերակառուցողական աշխատանքների իրականացում, առաջիկա տարիներին վերանորոգվելիք հաստատությունների մատչելիության ապահովում (ԱԺ, Կառավարություն, Կրթության և գիտության նախարարություն,

Քաղաքաշինության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը)

- Նոր կառուցվող և վերակառուցվող ուսումնական հաստատությունների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը)
- Յուրաքանչյուր մարզի ամեն քաղաքում և Երևանի բոլոր համայնքներում հաշմանդամների համար առնվազն մեկական անարգել դպրոցի առկայություն (Կրթության և գիտության նախարարություն, մարզերի կրթության բաժիններ, Երևանի քաղաքապետարան, մարզապետարաններ, միջազգային կազմակերպություններ, մասնավոր հիմնադրամներ, ՀԿ-ներ)
- Անհրաժեշտության դեպքում անհատական ծրագրերի մշակում հաշմանդամ երեխաների տնային պայմաններում ուսուցման համար (Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, դպրոցներ, ՀԿ-ներ)
- Համայնքներում մտավոր հետամնաց երեխաների կենտրոնների ստեղծում՝ նրանց կարողությունների և հմտությունների զարգացման համապատասխան ծրագրերով (Կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, մարզերի կրթության բաժիններ, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ)
- ԲՈՒՀ-երում և միջնակարգ մասնագիտական հաստատություններում պետ. պատվերի սահմաններում հաշմանդամների նկատմամբ արտոնությունների պահպանում (Կրթության և գիտության նախարարություն, ԲՈՒՀ-եր)
- Բարձր առաջադիմություն ունեցող հաշմանդամ երիտասարդների համար հետբուհական կրթության պետպատվերի տեղերի հատկացում (Կառավարություն, Կրթության և գիտության նախարարություն, ԲՈՒՀ-եր)

Զբաղվածություն

Հասարակության մեջ հավասար իրավունքների ապահովման գնահատման հիմնական չափանիշներից է զբաղվածության ցուցանիշը: Հայտնի է յուրաքանչյուր անհատի կայացման հարցում աշխատանքային գործունեության գործոնը: Այն հատկապես կարևորվում է հաշմանդամների պարագայում. աշխատանքով ապահովված լինելը

հաշմանդամ անձին լավատեսություն ու ինքնավստահություն է հաղորդում, հասարակության և ընտանիքի համար բեռ լինելու փոխարեն պիտանի լինելու գիտակցությունը օգնում է ազատվելու իր անձի նկատմամբ անլիարժեքության բարդությից: Հայաստանի Հանրապետությունում ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում հաշմանդամները իրականում զրկված են իրենց նախասիրություններին կամ շուկայի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան կրթություն ստանալու հնարավորությունից, քանի որ վերաորակավորման և վերապատրաստման կրթական համակարգը հիմնականում վճարովի է: Կրթամակարդակը ուղղակի և դրական ազդեցություն ունի տնտեսական ակտիվության վրա, սակայն կրթության ազդեցությունը միջնորդավորված է զբաղվածության գործոնով: Կրթամակարդակի և զբաղվածության կապն առավել արտահայտված է լինում մասնագիտական կրթության առկայության դեպքում: Բացի այդ, հավասար հնարավորությունների ապահովման համար կարևոր գործոն է աշխատատեղի մատչելիությունը:

Զբաղվածության ոլորտում չափազանց ուսանելի է Բրիտանիայի օրինակը, որտեղ 1940 թվականից հաշմանդամների համար սահմանված էր 3 տոկոսանոց աշխատանքային քվոտա (20-ից ավելի աշխատող ունեցող գործատուների համար): 1996թ. օրենսդրական բարեփոխման արդյունքում աշխատանքային քվոտան սկսվեց կիրառվել առնվազն 15 աշխատող ունեցող հաստատություններում, որի հետևանքով օրենքի կարգավորման շրջանակում ընդգրկվեցին ևս 45000 գործատու, հաշմանդամների համար ստեղծվեց 60000 նոր աշխատատեղ, իսկ հաշմանդամների աշխատանքի տեղավորման համար գործադրվեց պետական աջակցության գործուն համակարգ, որը ներառում է հաշմանդամներին և գործատուներին տրամադրվող պետական օժանդակություն: Ներկայումս Բրիտանիայում պետական աջակցության ծավալը և բնույթը պայմանավորված են հաշմանդամին այլոց հետ հավասար պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների ծավալով և բնույթով:

Եվեդիայում նույնպես գործում է հաշմանդամների զբաղվածության ապահովման գործուն համակարգ: Այստեղ հաշմանդամների աշխատանքի տեղավորման համար կատարված ծախսերը համարվում են ներդրում և ոչ թե անվերադարձ ծախս, քանի որ աշխատող հաշմանդամը դառնում է հարկատու, շատ ավելի պաշտպանված է և կարող է ինքնուրույն լուծել իր հարցերը՝ դրանով թեթևացնելով հասարակության բեռը:

Հայաստանի տարբեր հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հաշմանդամների զբաղվածության հարցը հանդիսանում է հրատապ հարցերից մեկը, քանի որ հաշմանդամները քիչ են ներգրավված այստեղ: Աշխատանքի համար դիմող հաշմանդամներին հաճախ մերժում են՝

հիմնավորելով մերժումը ծանր աշխատանքային պայմաններով ու համապատասխան աշխատատեղերի բացակայությամբ: Բացառությունների թվում հարկ է հատուկ նշել Իջևանի կենցաղսպասարկման ձեռնարկությունը, որտեղ գործադիր տնօրենը սայլակով է տեղափոխվում: Մյուս ձեռնարկություններում հաշմանդամները կատարում են օպերատորների, կրպակի աշխատողների, պահակի և այլ աշխատանքներ: Այն հաստատություններում, որտեղ աշխատում են հաշմանդամներ, աջակցության որոշակի միջոցներ են նախատեսված՝ հիմնականում նյութական օգնություն: Որոշ դեպքերում տրամադրվում է նաև ֆիզիկական և հոգեբանական աջակցություն, տրանսպորտ, հաշմանդամների համար սահմանվում է կարճ աշխատանքային օր և աշխատանքի թեթև ռեժիմ: Հաշմանդամների կարիքների համար որոշ հատուկ ենտ հաստատություններում առկա են հատուկ մասնագետներ: Այնուամենայնիվ, հաստատությունների մեծամասնությունը չունի հաշմանդամների կարիքների համար նախատեսված որևէ մասնագետ կամ տեխնիկական միջոց:

Թեև հաշմանդամների աշխատանքի ընդունմանը խոչընդոտող հանգամանքների շարքում հազվադեպ են նշվում սուբյեկտիվ գործոնները՝ հասարակության վերաբերմունքը ու հաշմանդամի կողմից խուսափումը, այս հաստատությունների ներկայացուցիչների մոտ առավել վառ են արտահայտվում նախապաշարմունքները: Նրանք նշում են, որ հաշմանդամները հաճախ չունեն անհրաժեշտ կրթամակարդակ կամ մասնագիտություն աշխատանքի ընդունվելու համար: Հարցվողների համարյա կեսը նշել է համապատասխան աշխատանքի բացակայության մասին ընդգծելով, որ աշխատանքի բնույթը հարմար չէ հաշմանդամների համար, թեև մյուս հիմնարկների փորձը ցույց է տալիս, որ ցանկության դեպքում հարմար աշխատանք հիմնականում հնարավոր է գտնել:

Գործատու կազմակերպությունների ղեկավարները նշել են, որ հարկավոր է արտոնություններ տրամադրել այն հաստատություններին, որոնք հաշմանդամներ են վերցնում աշխատանքի: Նման դեպքում հնարավոր է, որ կփոխվի նաև գործատուների վերաբերմունքը և նրանք, շահագրգռված լինելով աշխատանքի ընդունել հաշմանդամի, այդքան խիստ դիրքորոշում չեն դրսևորի:

Մեր հանրապետությունում ըստ պաշտոնական տվյալների աշխատունակ հաշմանդամների ընդամենը 7%-ն է ապահովված աշխատանքով: 1200 հաշմանդամների շրջանում կատարված սոց. հարցման արդյունքները ցույց են տալիս գործազրկության շատ ավելի բարձր մակարդակ: Կարևոր է նաև, որ գործազրկությունը ավելի բարձր տոկոս է կազմում հաշմանդամ կանանց շրջանում, քան տղամարդկանց (համապատասխանաբար 78,5 և 65,5): Հետազոտված հաշմանդամների շրջանում գործազրկության բարձր մակարդակը ցույց է տալիս

հանրապետությունում աշխատանքային շուկայում արտադրողական և եկամուտ բերող աշխատանքի համար հավասար հնարավորությունների բացակայությունը:

Ըստ կրթության մակարդակի զբաղվածության բերված ցուցանիշները ակնառու ցույց են տալիս հաշմանդամների համար կրթություն ստանալու անհրաժեշտությունը զբաղվածության հիմնախնդիրը որոշ չափով լուծելու համար: Լրիվ միջնակարգ կրթություն ստացածների 50 տոկոսը, թերի բարձրագույն ստացածների 16,6 տոկոսը և բարձրագույն ավարտածների 33 տոկոսը աշխատում են, թեև նրանցից մի մասը՝ ոչ ըստ ստացած կրթության: Աշխատելու ցանկացողների 50%-ին խանգարում է համապատասխան աշխատանքի, աշխատատեղերի բացակայությունը, 29,7 տոկոսին հիվանդությունները, մնացած՝ 14,8%-ին, խանգարող հանգամանք են անհրաժեշտ որակյալ սարքավորումներ, պրոթեզներ չունենալը և ձեռք բերելու անհնարինությունը: Աշխատելու ցանկություն ունեցողները կարևոր են համարում օրենսդրական փոփոխությունները: Հարկ է նշել, որ «Հավատ» ՀԿ կողմից 2003թ. իրականացված «Հարկային դաշտի օրենսդրական բարեփոխումներ հաշմանդամների համար» շահերի պաշտպանության ծրագիրը, որի շրջանակներում և իրականացվել է վերոհիշյալ սոց. հարցումը, մշակվել և ԱԺ է ներկայացվել օրենսդրական նախաձեռնություն, համաձայն որի 60% և ավելի հաշմանդամ ընդգրկող գործատուները ազատվում են ավելացված արժեքի հարկից: ԱԺ-ում այս օրինագիծը երկու անգամ դրվել է շրջանառության մեջ, քանի որ Կառավարության կողմից այն կրկնակի առարկվել է: Լրամշակվելուց հետո այն կրկին շրջանառության մեջ է. 2005թ. աշնանը ակնկալում ենք, որ օրենսդրական նախաձեռնությունը կստանա օրենքի ուժ:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Զբաղվածության ոլորտում հաշմանդամների իրավունքների, աշխատատեղերի մատչելիությունն ապահովող գոյություն ունեցող իրավական ակտերի մասին բուկլետների հրապարակում և հաշմանդամների ու գործատուների իրազեկում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Հաշմանդամ անձանց աշխատանքային հնարավորությունների ձգարտում (ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա Երևանում և մարզերում սեռաձևային հարմարությունների և սարքավորումների (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Տեղերում միջին մասնագիտական կրթության զարգացման

Կառավարության քաղաքականությանը ՀԿ-ների, համայնքների, ՏԻՄ-երի ակտիվ աջակցություն

- Հաշմանդամ մարդկանց համար աշխատատեղերի մատչելիության իրավունքի իրականացման վերահսկում (ՀԿ-ներ)
- Ենթաօրենսդրական փոփոխությունների կատարում «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշմանդամներին աշխատատեղերով ապահովելու վերաբերյալ դրույթների կիրարկման վերաբերյալ (Կառավարություն, ՀԿ-ներ)
- Օրենսդրական բարեփոխումների շարունակական իրականացում գործատուների հարկային բեռի թեթևացման, քվոտաների սահմանման ուղղությամբ (ԱԺ, Կառավարություն, ՀԿ-ներ)
- Հաշմանդամների կողմից մանր ու միջին բիզնեսով զբաղվելու խթանմանն ուղղված պետական հովանավորություն հաշմանդամների արտադրական կոմբինատներին և հաշմանդամ ձեռներեցներին՝ (ԱԺ, Կառավարություն, ՀԿ-ներ)
- Երևանում և մարզերում գործող պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների մատչելիության աստիճանական ապահովում, առաջնահերթ կարգով հարմարեցման ենթակա հաստատությունների ցանկի մշակում և համապատասխան վերակառուցողական աշխատանքների իրականացում, առաջիկա տարիներին վերանորոգվելիք հաստատությունների մատչելիության ապահովում (ԱԺ, Կառավարություն, Քաղաքաշինության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը)
- Նոր կառուցվող և վերակառուցվող պետական ու մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ)
- Հաշմանդամների կարիքներին համապատասխան աշխատատեղերի հարմարեցման վերաբերյալ օրենսդրության կատարելագործում (ԱԺ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀԿ-ներ)
- Ձեռնարկություններում հաշմանդամ մարդկանց հետ վարվելակերպի ուսուցում (ՀԿ-ներ)
- ՀԿ-ներին ձեռնարկատիրությամբ զբաղվելու օրենսդրական դաշտի ապահովում՝ նրանց ինքնաֆինանսավորումն ապահովելու համար (ԱԺ, Կառավարություն, ՀԿ-ներ)
- Դրամաշնորհային ծրագրերով աշխատող հաշմանդամների

հասարակական կազմակերպությունների ԱԱՀ-ից ազատում (ԱԺ, Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀԿ-ներ)

- Պրոթեզների, սայլակների վերանորոգման անարգել արհեստանոցների ստեղծում՝ օգտագործելով հաշմանդամ անձանց աշխատուժը (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ)

Մ Շ ա տ ո յ թ

Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները մեծ նշանակություն են տալիս հասարակությանը հաշմանդամների ինտեգրմանը՝ արվեստին ու մշակութային կյանքին նրանց մասնակից դարձնելու միջոցով: Առավել տաղանդավոր հաշմանդամները ժամանակ առ ժամանակ հնարավորություն են ստանում մասնակցել ցուցահանդեսների, համերգների (այդ թվում՝ արտասահմանում անցկացվող), կատարելագործել իրենց ունակությունները:

Հայաստանում գործում են տարբեր ստեղծագործական կոլեկտիվներ, ինչպես հաշմանդամների, այնպես էլ՝ ինտեգրացված:

Մասնավորապես կարելի է նշել խուլերի մնջախաղի «Օվասիս» թատրոն-ստուդիան և պարային համույթը, ողնուղեղային վնասվածք ունեցող մարդկանց «Փարոս» կամերային երգչախումբը (աշխարհում միակ երգչախումբը՝ կազմված անվասայլակով երգիչներից), «Հույսի կամուրջ» ՀԿ-ի թատերախումբը, կույրերի և վատ տեսնողների երգչախումբը,

Ժ ո ղ ո վ ղ դ ա կ ա ն
գ ո ռ ծ ի ք ն ե ռ ի
համույթները:

Բ ա ց ի ա յ դ ,
գործում են խուլերի
կ ե ռ ա մ ի կ ա յ ի
ա ռ հ ե ս տ ա ն ո ց ը ,
կ ե ռ պ ար վ ե ս տ ի
և երաժշտական
խ մ բ ա կ ն ե ռ ը
հաշմանդամության
տ ար բ ե ռ ձ և ե ռ
ունեցող մարդկանց
համար և այլն:

Վ ե ռ ը ն շ վ ա ծ



նվաճումների հետ հարկ է նշել նաև, որ Հայաստանում գրեթե հնարավոր չէ հաշմանդամների մուտքը մշակութային հաստատություններ: Ճարտարապետական արգելքների հետևանքով հաշմանդամների ճնշող մեծամասնությունը ֆիզիկապես հնարավորություն չունի այցելել մշակութային միջոցառումներ, համերգներ, թանգարաններ, ցուցահանդեսներ և այլն:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Պետական աջակցություն հաշմանդամների և ինտեգրացված գործող կոլեկտիվներին (ԱԺ, Կառավարություն, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր)
- Հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների



ցուցահանդեսների կազմակերպում (Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)

- Յուրաքանչյուր մարզում արվեստի և մշակույթի ինտեգրացված խմբակների ստեղծում (ՀԿ-ներ, ՏԻՄ-եր)
- Երևանում և մարզերում գործող մշակութային օջախների մատչելիության ապահովում, առաջնահերթ կարգով հարմարեցման ենթակա հաստատությունների ցանկի մշակում և համապատասխան վերակառուցողական աշխատանքների իրականացում, առաջիկա տարիներին վերանորոգվելիք հաստատությունների մատչելիության ապահովում (ԱԺ, Կառավարություն, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, Քաղաքաշինության

նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, տես նաև «Մատչելիություն» բաժինը)

- Նոր կառուցվող և վերակառուցվող մշակութային օբյեկտների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ)
- Համապատասխան մասնագետների (մասնավորապես՝ հոգեբանների) նախապատրաստում և տրամադրում մշակութային օջախներին (Կրթության և գիտության նախարարություն, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն)

Մոռոս

Հաշմանդամային սպորտը բուռն զարգացում է ապրել վերջին 10-15 տարիների ընթացքում: 1989-ից սկսած կազմակերպվել են 20 ամառային և ձմեռային մարզա-առողջարանային ճամբարներ, որտեղ

հանգստացել և մարզվել են շուրջ 2000 հաշմանդամներ: Ամեն տարվա մայիսի 28-ին, Հայաստանի անկախության օրվա կապակցությամբ, անցկացվում է անվասայլակներով հաշմանդամների Երևան - Էջմիածին մարաթոնը:

Հայաստանի Ազգային Պարաօլիմպիկ կոմիտեն հիմնադրվել է 1994թ. և հիմնադրման օրվանից զբաղվում է ազգային հաշմանդամային սպորտի զարգացմամբ: 1994 թվականից ի վեր հայ մարզիկները մասնակցում են աշխարհի, Եվրոպայի առաջնություններին և Ամառային ու Ձմեռային Պարաօլիմպիկ խաղերին: Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ 1996թ. հայ հաշմանդամ մարզիկները մասնակցեցին Ատլանտայի Պարաօլիմպիկ խաղերին: Նրանք Հայաստանը ներկայացրեցին երկու մարզաձևով՝ առագաստանավային սպորտ և ծանրամարտ: Ատլանտայի Պարաօլիմպիկ խաղերին հաջորդեցին 1998թ. Նագանոյի Ձմեռային Պարաօլիմպիկ խաղերը, 2000թ. Սիդնեյի Ամառային Պարաօլիմպիկ խաղերը և 2002թ. Սոլթ Լեյք Սիթիի Ձմեռային Պարաօլիմպիկ խաղերը: 2004թ. սեպտեմբերին հայ հաշմանդամ մարզիկները մասնակցեցին Աթենքի Ամառային Պարաօլիմպիկ խաղերին և Հայաստանը ներկայացրեցին չորս մարզաձևով՝ լող, թեթև ատլետիկա, ծանրամարտ և նետածություն:

Հասարակական կազմակերպություններից Հայաստանում հաշմանդամային սպորտով զբաղվում են «Փյունիկը» և «Սկարպը»: Մեծ

ներդրում է կատարում Հայկական Կարմիր Խաչի ընկերության Միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոնը, որտեղ ստեղծված են հիանալի պայմաններ հաշմանդամների մարզվելու և մրցումներ անցկացնելու համար:



Ո լ ո Ր Տ Ո Ւ Մ
նախատեսվող գործողությունների պլան.

- Անմիջական պետական աջակցություն Հայաստանի պարաօլիմպիկ կոմիտեին և հաշմանդամային սպորտով զբաղվող ՀԿ-ներին և այլ հաստատություններին (Սպորտկոմիտե, Պարաօլիմպիկ կոմիտե, Հայկական Կարմիր Խաչի ընկերության Միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոն, «Փյունիկ», «Սկարպ» ՀԿ-ներ)
- Հաշմանդամ մարզիկների մրցումների պարբերական անցկացում (Սպորտկոմիտե, Պարաօլիմպիկ կոմիտե, Հայկական Կարմիր Խաչի ընկերության Միջազգային հետվնասվածքային վերականգնողական կենտրոն, «Փյունիկ», «Սկարպ» ՀԿ-ներ)
- «ԼԻՆՍԻ» ծրագրի շրջանակներում վերակառուցվող սպորտային օբյեկտների մատչելիության ապահովում և համապատասխան շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ («ԼԻՆՍԻ» ԾԻԳ, Կառավարություն, ՀՀ Քաղաքաշինության նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, Սպորտկոմիտե, Պարաօլիմպիկ կոմիտե, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը և նկար 3)

Մոտիվացան աջակցություն

Սոցիալական օգնության ոլորտում Հայաստանում վիճակը մնում է դեռևս անբավարար, որն արձանագրված է նաև ՀՀ Կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: 2002 թվականին հաշմանդամության կենսաթոշակը միջինը 3989 դրամ էր, որը 2015թ. նախատեսվում է դարձնել 21728 դրամ: Ներկայիս կենսաթոշակի չափը ցածր է աղքատության սահմանային ցուցանիշներից և չի ապահովում նույնիսկ պարենային նվազագույն

զամբյուրը՝ 1 շնչի հաշվով ամսեկան 12000 դրամ: Ակհայտ է, որ ՀՀ-ում կենսաթոշակային համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի:

Բրիտանիայիում սոցիալական օգնությունը սահմանափակված չէ միասնական հաշմանդամության կենսաթոշակով: Այստեղ գործում են 55 տեսակի նպաստներ, որոնց տրամադրման համար կան տարբեր չափորոշիչներ, օրինակ 16 տարին լրացած աշխատող հաշմանդամների հարկերի փոխհատուցում, մինչև 65 տարեկան ծանր հիվանդների հաշմանդամության կենսամակարդակի նպաստ և այլն:

Եվեդիայում նույնպես նպաստները բազմատեսակ են, օրինակ 1/4-ով աշխատունակությունը կորցրած 16-ից 40 տարեկան անձանց հաշմանդամության թոշակ, 6 ամսից ավելի հիվանդ երեխաների խնամքի նպաստ, հաշմանդամի տունը կամ բնակարանը հարմարեցնելու նպատակով տրամադրվող դրամաշնորհ և այլն:

Բոլորի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու խնդիրն, անկասկած, մնում է սոցիալական արդարության կարևորագույն նախադրյալը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից նշակված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է անցնել սոցիալական աջակցության տրամադրման տարբերակված մոտեցման, որը նպատակաուղղված կլինի նաև հաշմանդամների վիճակի բարելավմանը: Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների համար սահմանված են տարատեսակ արտոնություններ, որոնց մի մասը, ցավոք, տարածվում է սահմանափակ թվով անձանց վրա, որի հետևանքով դրանց ազդեցությունը զգալի չէ: Միևնույն ժամանակ, առկա է զգալի դրական տեղաշարժ հաշմանդամ մարդկանց անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ սայլակներով, լսողական սարքերով և այլ սարքավորումներով ապահովելու հարցում: Կարելի է փաստել, որ լսողական սարքերի և սայլակների տրամադրման գործում իրականացվող ծրագրերի շնորհիվ հիմնականում բավարարվում է պահանջարկը՝ քանակի (բայց ոչ միշտ՝ որակի) տեսակետից:

Հաշմանդամության հիմնահարցերի լուծման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը մեծապես պայմանավորված է պետական մարմինների որոշումների ընդունման գործընթացում հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, դրանց կենսագործման վերահսկողության գործուն համակարգերի առկայությամբ:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.

- Հաշմանդամների կենսաթոշակի չափը հասցնել նվազագույն սպառողական զամբյուրի ապահովմանը (ԱԺ, Կառավարություն,

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)

- Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին առկա օրենսդրության վերաբերյալ հաշմանդամների իրազեկության բարձրացում բուկլետների հրապարակում, սեմինարների անցկացում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ, ՀԿ-ներ)
- Հաշմանդամների տվյալների բազայի ստեղծում՝ ըստ հաշմանդամության տեսակների և կարիքների (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ, ՀԿ-ներ)
- Սոցիալական աշխատողների վերապատրաստում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ)
- Մարզերում սոցիալական աշխատողների ներգրավման ընդլայնում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ)
- Երևանի և մարզերի համայնքներում ցերեկային սոցիալական կենտրոնների ստեղծում հաշմանդամ մարդկանց համար (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ, ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ)
- Երևանի և մարզերի համայնքներում ցերեկային զբաղվածության կենտրոնների ստեղծում մտավոր հաշմանդամների համար (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզերի սոցիալական բաժիններ, ՀԿ-ներ, մասնավոր հիմնադրամներ, միջազգային կազմակերպություններ)
- Հաշմանդամ մարդկանց տրամադրվող օժանդակ տեխնիկայի (սայլակ, պրոթեզ, օրթեզ, լսողական սարք և այլն) որակի և քանակի բարձրացում, պետական միջամտության ավելացում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, միջազգային կազմակերպություններ, մասնավոր հիմնադրամներ, ՀԿ-ներ)
- Մանկուց հաշմանդամ երեխայի խնամակալի 50 տարեկանը լրանալուց հետո արտոնյալ թոշակավորում (ԱԺ, Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)
- Հաշմանդամ անձի խնամակալի կարգավիճակի սահմանում և թոշակավորում (ԱԺ, Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)
- Հաշմանդամության պատճառով անաշխատունակ մարդկանց

բազային թռչակի ավելացում, կամ հաշմանդամության տարիները որպես աշխատանքային ստաժի հաշվարկում (ԱԺ, Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)

- Հաշմանդամության չափորոշիչների վերանայում (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀԿ-ներ)
- Բազմանպաստային ձկուն համակարգի ստեղծում և կատարելագործում ընտանիքում առկա հաշմանդամի առաջնահերթությամբ, անկախ ընտանիքի կազմից (Կառավարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)
- Երևանում և մարզերում գործող սոցիալական ծառայության հաստատությունների մատչելիության աստիճանական ապահովում, առաջնահերթ կարգով հարմարեցման ենթակա հաստատությունների ցանկի մշակում և համապատասխան վերակառուցողական աշխատանքների իրականացում, առաջիկա տարիներին վերանորոգվելիք հաստատությունների մատչելիության ապահովում (ԱԺ, Կառավարություն, Քաղաքաշինության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ, տե՛ս նաև «Մատչելիություն» բաժինը)
- Նոր կառուցվող և վերակառուցվող սոցիալական ծառայության հաստատությունների շինարարական աշխատանքների իրականացման մոնիտորինգ (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինության պետական տեսչություն, ՀԿ-ներ)

ՀԱՍՏԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՎԵՌԱԲԵՐՄՈՒՄ *և ԻՄԱՁԵԿՈՒԹՅՈՒՆ*

Հաշմանդամների իրավունքների միջազգային շարժումը ճիշտ է համարում հաշմանդամության հետևյալ ծնակերպումը. «Հաշմանդամությունը հասարակության մեջ գոյություն ունեցող պայմանների հետևանք հանդիսացող ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգեբանական շեղումներով մարդու գործունեության արգելքները կամ սահմանափակումներն են, որոնք զրկում են նման մարդկանց ակտիվ կյանք վարելու հնարավորությունից»: Հետևաբար հաշմանդամությունը սոցիալական անհավասարության վառ օրինակ է: Հաշմանդամությունը

սոցիալական, այլ ոչ թե բժշկական հասկացություն է: Հաշմանդամության սոցիալական մոդելի ենթատեքստում տրամաբանական է օգտագործել համապատասխան տերմինաբանություն, որը չի ստեղծում բացասական ստերեոտիպեր և չի վիրավորում հաշմանդամ մարդու արժանապատվությունը:

Ինչպես ռասայի և ազգային նկարագիր տալու դեպքում, այնպես էլ հաշմանդամ մարդու համար որևէ տերմինի ընտրությունը հաճախ հիմնվում է ստերեոտիպերի, «հանդուրժողական» վերաբերմունքի և այլ զգայական ընկալումների վրա: Շատ հաշմանդամ մարդիկ, ինչպես նաև նրանց ներկայացնող կազմակերպություններ, դեմ են արտահայտվում այնպիսի տերմինների օգտագործմանը, ինչպես, օրինակ, «կաղ», «գամված», «գոհ» և այլն:

Կրթական, մշակութային, բուժվերականգնողական հաստատությունների ու հիմնարկ-ծեռնարկությունների հետազոտության արդյունքում բացահայտվեց, որ հաշմանդամների ինտեգրման խոչընդոտներից են հանդիսանում հասարակության և հենց հաշմանդամ մարդկանց դիրքորոշումները: Առաջին հերթին, դա անլիարժեքության բարդույթն է, որը կրթական ու մշակութային հաստատությունների բազմաթիվ ղեկավարների կարծիքով կարևոր խոչընդոտ է հանդիսանում հաշմանդամների ինտեգրման համար: Նշվել է նաև ցանկության բացակայությունը հաշմանդամների կողմից, մեկուսացումը, որոշ դեպքերում՝ ծնողների կողմից դրսևորվող դիրքորոշումները և շրջապատի ոչ ադեքվատ վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ՝ լինի դա խիստ սրված ուշադրություն,

թե խուսափում: Որոշ հարցվողների կարծիքով հ ա շ մ ա ն դ ա մ ն եր ի ֆ ի զ ի կ ա մ ն թերությունները թույլ չեն տալիս համապատասխան կրթություն, աշխատանք ստանալու, մշակութային մ ի ջ ո ց ա ռ ու մ ն եր ի ն մասնակցելու և նույնիսկ ա մ բ ու լ ա տ ո թ ի ա հ ա ճ ա խ ե լ ու : Ի ս կ գ ո թ ա տ ու ն եր ի մ ի մասը նշել է, որ «ներկա գործազրկության պայմաններում հաշմանդամին աշխատանքի տեղավորելը ա ն հ ն ա թ ի ն է » ,



«մրցակցությունը և աշխատատեղերի սահմանափակությունը ստիպում է, որ աշխատեն միայն առողջ ու պատրաստված մասնագետներ»:

Մի շարք հաստատություններում նշել են, որ հաշմանդամների հաճախելու համար ոչ մի խոչընդոտող հանգամանք չկա: Հետաքրքիր է, որ նման նշում արել են հիմնականում այնտեղ, որտեղ հաշմանդամներ չեն հաճախում: Երևանի դպրոցներից մեկում, օրինակ, խոչընդոտների վերաբերյալ արտահայտվել է հետևյալ կարծիքը. «ոչ մի խոչընդոտ չկա, քանի որ, կարծում են, այստեղ չկան հաշմանդամ երեխաներ»: Իսկ երաժշտական դպրոցներից մեկում նշեցին, որ «նույնիսկ եթե լինեն շենքային պայմաններ, հաշմանդամ երեխաները չեն կարող երաժշտական կրթություն ստանալ: Մենք աշխատում ենք չունենալ հաշմանդամներ. դա կհանգեցնի ֆիզիկական և հոգեկան ավելորդ ծանրաբեռնվածության»: Այս պատասխանները ինքնին վկայում են մի կարևոր խոչընդոտող հանգամանքի՝ հաշմանդամների ինտեգրման նկատմամբ հաստատությունների կողմից առկա բացասական դիրքորոշման մասին: Թե՛ ֆիզիկական թերությունները, որ իրականում միշտ չէ, որ ուղղակիորեն առնչվում են կրթական, մշակութային կամ աշխատանքային գործունեության հետ, թե՛ աշխատատեղերի բնույթի անհամապատասխանությունը հաճախ արհեստականորեն ստեղծված, մտացածին արգելքներ են, որոնք հնարավոր է հաղթահարել զուտ վերաբերմունքի փոփոխության միջոցով: Այդ փոփոխությունը անհրաժեշտ է ոչ միայն հաշմանդամներին, այլ, թերևս, կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր անհատի մարդկային կերպարի և ընդհանրապես քաղաքակիրթ հասարակության ձևավորման համար:

Ոլորտում նախատեսվող գործողությունների պլան.



- Կ ա զ մ ա կ եր պ ե լ հաշմանդամների նկատմամբ ստերեոտիպերի և դրանց հաղթահարման վերաբերյալ հեռուստահաղորդում, որը շաբաթական առնվազն մեկ անգամ հեռարձակվելու է Հ1-ի եթերում (Հանրային հեռուստաընկերություն, Կառավարություն, ՀԿ-ներ)
- Մեծ տպաքանակով հրապարակել հաշմանդամների նկատմամբ ճիշտ վարվելակերպի և տերմինաբանության

խնդիրներին առնչվող ձեռնարկներ (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀԿ-ներ)

- Ընդլայնել հաշմանդամների իրավունքների մասին քարոզչական աշխատանքները (ԶԼՄ-ներ, մասնավորաբար՝ Հանրային հեռուստաընկերություն և Հանրային ռադիո, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՏԻՄ-եր, ՀԿ-ներ)
- Կազմակերպել ուսումնական հաստատություններում հատուկ դասընթացներ երիտասարդության մեջ հաշմանդամների նկատմամբ բարենպաստ վերաբերմունք ձևավորելու նպատակով (Կրթության և գիտության նախարարություն, ՀԿ-ներ)

Հավելված 1

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթական և մշակութային հաստատությունների, հիմնարկ-ծեռնարկությունների ու բուժվերականգնողական հաստատությունների ֆիզիկական մատչելիության մոնիտորինգի արդյունքները

Հենաշարժողական խնդիրներով հաշմանդամների համար կրթական, մշակութային ու բուժվերականգնողական հաստատությունների և հիմնարկ-ծեռնարկությունների մատչելիությունը ուսումնասիրելու համար իրականացվել է Հայաստանի 221 հաստատությունների հետազոտություն: Հետազոտության մեջ ընդգրկվել են 18-22 հաստատություն յուրաքանչյուր մարզում, ընդհանուր առմամբ ներկայացնելով 56-ական կրթական և մշակութային հաստատություններ, 54 հիմնարկ-ծեռնարկություններ և 55 բուժվերականգնողական հաստատություններ:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ անմատչելի դարպասը առկա էր 221-ից 38 դեպքերում՝ կազմելով 17 տոկոս: Ավելի նշանակալի խոչընդոտ են աստիճանները՝ դրանք առկա էին 43 տոկոսի դեպքում, այնուամենայնիվ, այդ աստիճանների մի մասը (95-ից 12-ը, հիմնականում Լոռի մարզում) զուգակցված էր թեքահարթակով, իսկ մեծ մասի դեպքում հնարավոր էր թեքահարթակ կառուցել:

ՀԱՐՑ 3. Անմատչելի դարպաս

	քանակ	տոկոս
կա	38	17.2%
չկա	172	77.8%
պատ.չկա	11	5.0%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

ՀԱՐՑ 4. Աստիճաններ փողոցում կամ բակում

	քանակ	տոկոս
կա	95	43.0%
չկա	111	50.2%
պատ.չկա	15	6.8%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

Շենքի մուտքը ավելի դժվար խնդիր է հանդիսանում մատչելիության տեսանկյունից: Շինությունների 81 տոկոսի մուտքը աստիճաններով է նախորդվում, և դրանց միայն 8 տոկոսն է, որ թեքահարթակ ունի, իսկ 72 տոկոսի դեպքում թեքահարթակ կառուցելու հնարավորություն կա: Հարկ է նշել, որ շենքերի սանդուղքները հիմնականում չունեն բազրիք (82 տոկոս), որը ևս կարևոր պարագա է ոչ միայն սայլակներով տեղաշարժվող, այլև հենակներով, թույլ և ծեղ մարդկանց բարձրանալու համար:

ՀԱՐՑ 9. Աստիճաններ շենքի մուտքի մոտ

	քանակ	տոկոս
կա	180	81.4%
չկա	36	16.3%
պատ.չկա	5	2.3%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

ՀԱՐՑ 10. Թեքահարթակի առկայությունը շենքի մուտքի մոտ

	քանակ	տոկոս
կա	15	8.3%
չկա, հնարավոր է կառուցել	130	72.2%
չկա, հնարավոր չէ կառուցել	31	17.2%
պատ. չկա	4	2.2%
ԸՆԴԱՄԵՆԸ	180	100%

Հաջորդ կետը, որ ենթակա է ուսումնասիրման, մուտքի դռներն են: Ուսումնասիրված հաստատություններից 9-ը ունենին նեղ դռներ (80 սմ-ից պակաս), որը դժվարանցանելի է դարձնում մուտքը սայլակով տեղաշարժվողների համար: Բացի այդ, հաստատությունների 32 տոկոսը ուներ բարձր շեն, որը թերևս շատերի համար աննկատելի, բայց և այնպես լրացուցիչ խոչընդոտ է սայլակի համար:

ՀԱՐՑ 15. Կլորտեղի դռների լայնությունը

	քանակ	տոկոս
մինչև 80սմ	9	4.1%
80 սմ և ավելի	201	91.0%
պատ.չկա	11	5.0%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

	քանակ	տոկոս
կա	70	31.7%
չկա	117	52.9%
պատ.չկա	34	15.4%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

ՀԱՐՑ 16. Շեն մուտքի դռների

Ինչ վերաբերում է շենքի ներսում առկա խոչընդոտներին, իմնական խոչընդոտ են հանդիսանում

աստիճանները, որ առկա են ուսումնասիրված հաստատությունների կեսում: Թեքահարթակ կար այս հաստատություններից միայն մեկում, 40 տոկոսի դեպքում այն հնարավոր է կառուցել: Որոշ դեպքերում խոչընդոտ են հանդիսանում նաև շեները (15 տոկոս) և միջանցքի նեղ լինելը (7 տոկոս):

ՀԱՐՑ 23. Աստիճաններ շենքի ներսում

	քանակ	տոկոս
կա	107	48.4%
չկա	103	46.6%
պատ.չկա	11	5.0%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

ՀԱՐՑ 24. Թեքահարթակի առկայությունը շենքի ներսում

քանակ

տոկոս

կա	1	0.9%
չկա, հնարավոր է կառուցել	43	40.2%
չկա, հնարավոր չէ կառուցել	56	52.3%
պատ. չկա	7	6.5%
ԸՆԴԱՄԵՆԸ	107	100%

Ուսումնասիրված շինությունների մեծ մասը՝ 86 տոկոսը, վերելակ չունենք. վերելակը առկա էր հիմնականում բուժվերականգնողական տիպի հաստատություններում (15 հաստատություն), մասնավորապես հիվանդանոցներում, որտեղ վերելակի լայնությունը մեծ մասամբ համապատասխանում էր չափանիշներին:

Առանձին ուսումնասիրման առարկա են նաև սենյակների ու սանհանգույցների դռները: Դրանք չէին համապատասխանում ընդունելի լայնությանը (80 սմ և ավելի) համապատասխանաբար 16 և 34 տոկոսի դեպքում:

Ընդհանրացնելով ստացած տվյալները՝ նշենք, որ բոլոր չափանիշներին միաժամանակ համապատասխանում էր ուսումնասիրված 221 ՀԱՐՑ 27. Սենյակի դռների լայնությունը և 221 ՀԱՐՑ 28. Սանհանգույցի դռների լայնությունը

	քանակ	տոկոս
մինչև 80սմ	36	16.3%
80 սմ և ավելի	171	77.4%
պատ.չկա	14	6.3%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%

	քանակ	տոկոս
մինչև 80սմ	75	34.4%
80 սմ և ավելի	128	57.9%
սանհանգույց չկա	8	3.6%
պատ.չկա	9	4.1%
ԸՆԴԱՄԵՆԸ	221	100%


հաստատություններից միայն երեքը, բոլորն էլ Գյումրի քաղաքում՝ թիվ 20 միջնակարգ դպրոցը, Բեռլինի Մոր ու մանկան կենտրոնը և ընտանեկան բժշկության կենտրոնը: Եթե փողոցի ու բակի խոչընդոտները շրջանցենք (որը հնարավոր է տրանսպորտի առկայության դեպքում)՝ մատչելի կարելի է համարել ևս ութ հաստատություն: Արարատի, Արմավիրի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

Անդրադառնալով իրավիճակի բարելավման հնարավորություններին՝ նշենք հետևյալը: Ինը հաստատություն մատչելի կդառնան միայն մուտքի մոտ թեքահարթակի կառուցման դեպքում, իսկ վեցը՝ թե մուտքի մոտ, թե ներսում կառուցելիս: Վեց հաստատություն հնարավոր է մատչելի դարձնել ընդամենը շենքերի չեզոքացման դեպքում: Միաժամանակ և շենքերի չեզոքացման, և թեքահարթակների կառուցման դեպքում մատչելի կդառնան 21 հաստատություն: Սանհանգույցների դռների լայնության հարցը լուծելով՝ ձեռք կբերենք ևս 41 մատչելի շինություն: Այսպիսով, բացի եղած երեք շինությունից, հետազոտության մեջ ընդգրկված 221 հաստատությունից ևս 83-ը կարող են դառնալ մատչելի հենաշարժողական պրոբլեմներով հաշմանդամների համար՝ համապատասխան միջոցառումների իրականացման շնորհիվ:

Կրթական, մշակութային, բուժվերականգնողական հաստատություններում ու հիմնարկ-ձեռնարկություններում


հաշմանդամների իրավունքների իրականացման մոնիտորինգի արդյունքները

Հաշմանդամների կրթական, մշակութային, աշխատանքային ու ամբողջապահական իրավունքների իրականացման մոնիտորինգի նպատակով 2004թ. նոյեմբեր – 2005թ. հունվար ամիսներին անց է կացվել կրթական, մշակութային, բուժվերականգնողական հաստատությունների ու հիմնարկ-ձեռնարկությունների հետազոտություն՝ հաշմանդամների հաճախ-ման, նրանց համար առկա միջոցների ու մասնագետների, ինչպես նաև առկա կարծիքների բացահայտման համար: Հարցումը իրականացվել է Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում՝ ընդգրկելով 56-ական կրթական և մշակութային, 54 գործատու և 55 բուժվերականգնողական հաստատություն: Երկայացունենք Խեղարկային և Երևանի հաստատությունների ղեկավարների հարցումից ստացված պատասխանները ամփոփ տեսքով:



Հաշմանդամների առկայությունը հաստատությունում

Ըստ տրված պատասխանների, հաստատություններ դիմած համարյա բոլոր հաշմանդամների դիմումները դրական արձագանք են ստացել: Մշակութային հաստատություններից երկուսը նշել են, որ դիմումները մերժվել են՝ համապատասխան պայմանների բացակայության պատճառով, հիմնարկ-ձեռնարկություններում վեց հոգի չի ընդունվել աշխատանքի՝ ծանր աշխատանքային պայմանների ու համապատասխան



աշխատատեղերի բացակայության պատճառով: Գեղարքունիքի երկու բուժփիննարկներ դիմող հաշմանդամներին հաճախ ուղարկվում են Երևան, քանի որ տեղական պայմանները անբավարար են:

Պատասխաններից ակնհայտ է, որ ամենից շատ հաշմանդամներ են հաճախում բուժվել բնական զնոդական հիմնարկներ, իսկ հիմնարկ-ձեռնարկություններում որպես աշխատող հաշմանդամները քիչ են ընդգրկված: Բացառությունների թվում հարկ է հատուկ նշել Իջևանի կենցաղսպասարկման ձեռնարկությունը, որտեղ գործադիր տնօրենը սայլակով է տեղափոխվում: Մյուս ձեռնարկություններում հաշմանդամները կատարում են օպերատորների, կրպակի աշխատողների, պահակի և այլ աշխատանքներ:

Տրամադրվող աջակցությունը, առկա մասնագետներն ու միջոցները

Հետազոտության մեջ ընդգրկված կրթական ու մշակութային հաստատությունները հաճախող հաշմանդամներին տրամադրվում է բազմատեսակ աջակցություն: Կրթական հաստատություններում մշակվում է հատուկ մեթոդիկա (17 պատասխան), տրամադրվում են մասնագետներ (18 պատասխան)՝ տնային ուսուցման համար և մասնագիտական աջակցության նպատակով: Հաստատություններից 20-ը նշեցին նյութական օգնությունը՝ հիմնականում գրեթե անկախ պիտույքների, հագուստի տեսքով, որոշ դպրոցներում իրականացվում է բուժական ֆիզկուլտուրա, իսկ միջնակարգ մասնագիտական ու բարձրագույն հաստատությունները կիրառում են վարձավճարի գեղջ կամ ընդհանրապես վճար չեն վերցնում հաշմանդամ ուսանողներից: Արարատի տեխնիկումում կառուցվել է թեքահարթակ, իսկ Գավառի պետական համալսարանը տրամադրում է ավտոմեքենա՝ հաշմանդամներին տեղափոխելու համար:

Մշակութային հաստատություններում որպես աջակցության միջոց ամենից ավելի հաճախ նշվել է ֆիզիկական օգնությունը՝ հաշմանդամի տեղափոխման համար: Կան նաև հատուկ մասնագետներ, մասնավորապես գեղարվեստի կետրոններում և մշակութային կրթական հաստատություններում, իսկ թատրոնները տրամադրում են անվճար տոմսեր և կամ կազմակերպում բարեգործական ներկայացումներ: Որոշ թատրոններ որպես աջակցության ձև նշում են դահլիճի անվճար տրամադրումը հաշմանդամների խնդիրներով զբաղվող կազմակերպություններին:

Հիմնարկներն ու ձեռնարկությունները աջակցում են հիմնականում նյութական օգնություններով՝ նման պատասխան են նշել հաշմանդամներին աշխատանքի ընդունած 19 հաստատությունից 12-ը: Տրամադրվում է նաև ֆիզիկական աջակցություն, հոգեբանական աջակցություն, տրանսպորտ, հաշմանդամների համար սահմանվում է կարճ աշխատանքային օր և աշխատանքի թեթև ռեժիմ: Բուժվել բնական զնոդական հաստատություններում տրամադրվում է այն օգնությունը, որի կարիքը ունենում է հիվանդը և որի հնարավորությունը առկա է հաստատությունում:

ՀԱՐՑ 6. Ի՞նչ տիպի աջակցություն է տրամադրվում հաշմանդամներին.

N	տարբերակ	Կրթական մշակութ. հիմնարկ բուժ ԸՆԴ				
1	մերթոդիկա	17	1		18	
2	տեխնիկա	4	6	2	12	
3	մասնագետ	18	7	1	3	29
4	նյութական օգնություն	20	3	12		35
5	հոգեբանական աջակցություն	1		2	2	5
6	բժշկական օգնություն	3			7	10
7	վարձավճարի գեղչ	3	1			4
8	մատչելի միջավայրի կառուցում	1	3			4
9	արհեստանոցներ	1				1
10	անվճար/ բարեգործական ներկայացումներ, էքսկուրսիաներ	8	1	9		
11	ֆիզիկական օգնություն		17	4		21
12	կարճ աշխ. օր			3		3
13	առանձին լսար					0
14	անվճար բուժօգնություն				4	4
15	ֆիզիոթերապևտիկ բուժում				5	5
16	դեդրոբայթային բուժում				10	10
17	վիրահատական միջամտություն				8	8
18	տնային այցեր				2	2
19	մերսում				3	3
20	այլ		2		7	9
0	ոչ մի բան	2		2	2	6
00	պատասխան չկա	21				21
	ԸՆԴԱՍԵՆԸ	91	48	27	53	249

Անդրադառնալով հաստատություններում առկա միջոցներին ու մասնագետներին, նշենք հետևյալը: Կրթական հաստատություններում ամենահաճախ հանդիպող մասնագետը հոգեբանն է (19 հաստատություն), ապա սուրդոմանկավարժը և լոգոպեդը (5-ական հաստատություն): Ընդ որում, սուրդոմանկավարժը առկա է հիմնականում միջնակարգ և հատուկ դպրոցներում, ինչպես նաև Սևանի պետական քոլեջում, իսկ լոգոպեդը՝ միջնակարգ ու հատուկ դպրոցներում և մանկապարտեզում: Տարբեր հաստատություններում կան նաև 2 բուժքույր, հատուկ դպրոցներում՝ մեկական արատաբան և սոցիալական աշխատող: Բազմաթիվ դպրոցներ նշել են հոգեբանի, սոցիալական աշխատողի և լոգոպեդի, ինչպես նաև մտավոր թույլ երեխաների հետ աշխատելու համար

հատուկ մանկավարժների կարիքը:

Գյումրիի երկու և Վարդենիսի ու Սիսիանի մեկական միջնակարգ դպրոցներում կա ուսուցման հատուկ համակարգ՝ մտավոր թերություններով երեխաների համար: Հաշմանդամների ծնողների հետ տարվող թիմային աշխատանքի գաղափարին ծանոթ են 56 կրթական հաստատություններից 33-ը, սակայն նման աշխատանք տարվում է նրանցից միայն 10-ի կողմից՝ հիմնականում միջնակարգ ու հատուկ հաստատություններում և Մարտունիի «Վանեվան» համալսարանում:

ՀԱՐՑ 13. Ծանոթ եք արդյոք հաշմանդամների ծնողների հետ տարվող թիմային աշխատանքի գաղափարին

N	տարբերակ	քանակ
1	այո, մեզ մոտ նման աշխատանք տարվում է	10
2	այո, բայց մեզ մոտ նման աշխատանք չի տարվում	23

3	ոչ	19
00	պատասխան չկա	4
	ԸՆԴՈՍԵՆԸ	56

Մշակութային և գործատու հաստատություններում նշվում են հետևյալ լրացուցիչ միջոցները, որոնք առկա են հաշմանդամների կարիքների համար-տրանսպորտ տեղափոխման համար, մասնագետներ, մասնավորապես

մանկավարժ-հոգեբան՝ մշակութային հաստատություններում: Այնուամենայնիվ, հաստատությունների մեծամասնությունը (44 մշակութային օջախ և 43 աշխատանքային հիմնարկ) չունեն հաշմանդամների կարիքների համար նախատեսված որևէ մասնագետ կամ տեխնիկական միջոցներ:

Ինչ վերաբերում է բուժվերականգնողական հաստատություններին, 32 հաստատություն նշել են, որ հաշմանդամների համար հատուկ լրացուցիչ միջոցներ չունեն: Տասը հաստատություն օժտված են հատուկ սարքավորումներով, Եղվարդի և Հրազդանի հիվանդանոցները նշել են սայլակների առկայությունը: Հաստատություններից 22-ում կան բազմատեսակ նեղ մասնագետներ: Տեխնիկական միջոցների ու կատարվող միջոցառումների բազմազանությամբ հատկապես աչքի է ընկնում Երևանի կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտը: Հարկ է նշել, որ վերականգնողական աշխատանքներ են նշել ուսումնասիրված հաստատություններից միայն ինը, մասնավորապես Վանաձորի «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկական, Սպիտակի վերականգնողական կենտրոնը, Ախուրյանի, Իջևանի, Սևանի, Կապանի և Գավառի պոլիկլինիկաները, Գավառի հիվանդանոցը և Երևանի հանրապետական հիվանդանոցը:

Հաշմանդամների ընդգրկմանը խոչընդոտող հանգամանքներ

Պարզելու համար, թե ինչն է խանգարում հաշմանդամների հաճախելուն հաստատություն՝ հարցման մեջ ընդգրկված բոլոր հաստատությունների ներկայացուցիչներին հարց է տրվել խոչընդոտող հանգամանքների մասին:

Դատելով ստացած պատասխաններից, կարելի է ասել, որ առաջնահերթ խոչընդոտ է հանդիսանում շենքային պայմանների անբարենպաստությունը՝ թեքահարթակների, վերելակների բացակայությունը, բազմաթիվ աստիճանները: Նյութատեխնիկական բազայի պակասը ևս կարևորագույն խոչընդոտ է հանդիսանում, ըստ հարցման մասնակիցների: Բացի այդ, նշվում է համապատասխան մասնագետների պակասը՝ հատկապես կրթական ու բուժվերականգնողական հաստատություններում, իսկ բժշկական հաստատություններում՝ նաև դեղորայքի պակասը: Այս բոլոր պատասխանները կարելի է խմբավորել հաստատությունում առկա պայմանների կատեգորիայի մեջ, և «պայմանների բացակայությունը», որը առանձնացվել է որպես պատասխանի տարբերակ, կարող է և համընկնել վերը թվարկված բոլոր պատասխանների հետ: Նշվում են նաև ընդհանուր կենցաղային պայմանները, այդ թվում և ջեռուցման բացակայությունը շենքում, որը խոչընդոտ է բոլոր հաճախորդների համար:

ՀԱՐՑ 7. Ի՞նչն է խոչընդոտում հաշմանդամների հաճախելուն այս հաստատություն

N տարբերակ	կրթական մշակութ. հիմնարկ բուժ ԸՆԴ				
1. շենքային պայմաններ	16	14	9	8	47
2. նյութատեխնիկական բազա	11	4	3	12	30
3. պայմաններ չկան	7	6	7	7	27

4. անլիարժեքության բարդույթ	7	11	1	1	20
5. տրանսպորտի բացակայություն	2	14		4	20
6. մասնագետներ չկան	7	3		8	18
7. ֆինանսական դժվարություններ	3	3	2	7	15
8. աշխատանքի բնույթ			14		14
9. աշխատատեղեր չկան			12		12
10. անմատչելի միջավայր	2	2	5	2	11
11. ֆիզիկական թերություններ	4	2	3	1	10
12. ցանկություն չունեն	1	3	3	1	8
13. ոչ ադեկվատ վերաբերմունք	1	4			5
14. ուղեկցողի բացակայություն		2		3	5
15. համապատասխան կրթական մակարդակի բացակայություն	1		4		5
16. պետական աջակցության բացակայություն	1	1	1	3	5
17. դեղորայքի պակաս				4	4
18. մեկուսացում	2				2
19. ծնողների դիրքորոշում	1	1			2

20.	այլ	1		1	1	3
0	ոչ մի բան	12	7	1	16	36
00	պատասխան չկա		1	8	1	10
	ԸՆԴՈՒՄԵՆԸ	79	78	74	79	310

Խոչընդոտների շարքում են նաև միջավայրի անմատչելիությունը և համապատասխան տրանսպորտի բացակայությունը, որը հատկապես հաճախ նշվում է մշակութային հաստատությունների կողմից: Արտաքին հանգամանք կարելի է համարել նաև պետական աջակցության բացակայությունը, որը նշել են հատկապես բուժվերականգնողական հաստատությունների կայացուցիչները:

Խոչընդոտների երրորդ հիմնական խումբը կապված է հենց հաշմանդամ մարդկանց բնութագրերի հետ. անլիարժեքության բարդությամբ, ցանկության բացակայությունը հաշմանդամների կողմից, մեկուսացումը, որոշ դեպքերում ծնողների կողմից դրսևորվող դիրքորոշումները և շրջապատի ոչ ադեքվատ վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ: Խոչընդոտող հանգամանքներ են, ըստ հարցվողների, ուղեկցող անձի բացակայությունը, ֆինանսական դժվարությունները՝ թե հաշմանդամի, թե հաստատության համար: Որոշ հարցվողների կարծիքով, հաշմանդամ մարդկանց ֆիզիկական թերությունները թույլ չեն տալիս համապատասխան կրթություն, աշխատանք ստանալու, մշակութային միջոցառումներին մասնակցելու և նույնիսկ ամբուլատորիա հաճախելու: Գործատուները նշում են նաև, որ հաշմանդամները հաճախ չունեն անհրաժեշտ կրթամակարդակը կամ մասնագիտությունը՝ աշխատանք ստանալու համար: 36 հաստատություններում նշել են, որ հաշմանդամների հաճախելու համար ոչ մի խոչընդոտող հանգամանք չկա:


**Հաստատությունների ֆիզիկական մատչելիության
հնարավորությունները ըստ հաստատության տեսակի և մարզերի
(աղյուսակներ ու գրաֆիկներ)**

տարբերակ
լիակատար մատչելի է

քանակ
3


հնարավոր է մատչելի դարձնել	83
հնարավոր չէ մատչելի դարձնել	72
տվյալները բավարար չեն	63
ԸՆԴԱՄԵՆԸ	221

Ճ³ ë³ ì³ á³ Õ³ Æ³ Õ³ Ý³» ñ³ ý³ Ç³ Ğ³ Ĩ³ Ī³ Ý³
 Û³ ì³ ã³ Ë³ á³ Õ³ Æ³ Ý³ Ñ³ ñ³ í³ á³ ã³ Õ³ Æ³ Õ³ Ý³» ñ³ Á




մատչելի է	հնարավոր է մատչելի դարձնել		
	հնարավոր չէ մատչելի դարձնել		
	տվյալներ չկան		
	ԸՆԴԱՄԵՆԸ		
1 կրթական	1	19	25
562	մշակութային		14
1856	3	հիմնարկներ	21

ü Ç½Çİ ³ İ ³ Ý Û³ ì ã»ÈÇáõÃÛ Ý ÑÝ³ ñ³ í áñáõÃÛõÝÝ»ñÁ
 Áëï Ñ³ ëï ³ ì áõÃÛõÝÝ»ñÇ ì »ë³ Ì Ý»ñÇ



	մատչելի է հնարավոր	է մատչելի դարձնել հնարավոր	չէ մատչելի դարձնել տյալներ	չկան ըՆԴԱ-	ՄԵՆԸ
ԸՆԴԱՄԵՆԸ	3	72	83	63	221
1 Գեղարքունիք	11	8	3		22
2 Շիրակ	3	9	8		20
3 Լոռի		6	5	9	20
4 Տավուշ		6	12	2	20
5 Վայոց Ձոր		12	3	6	21

Ծ³ ëï³ ï áõÃ³ Ý ý Ç½Ç³ İ³ Ý Û³ ï ã»ÉÇáõÃ³ Ý
 ÑÝ³ ñ³ í áñáõÃ³ ÕáõÝ³»ñÁ Áëï Û³ ñ½»ñÇ



	17 16	544 բուժվերակ.	2 18 17 18	55	
6 Սյունիք		1	16	3	20
7 Արմավիր		4	1	15	20
8 Արագածոտն	4	7	7		18
9 Կոտայք		11	3	6	20
10 Արարատ		10	2	8	20
11 Երևան		9	7	4	20
ԸՆԴԱՄԵՆԸ	3	83	72	63	221
Հարմարեցման հնարավորություններ ունեցող հաստատությունների ցանկ					
1. թեքահարթակ կառուցել մուտքի մոտ					

1. Վանաձոր

մարզի տարածքային
 հոգեբանական կենտրոն

- 2. Գյուճիկի թիվ 18 միջնակարգ դպրոց
- 3. Երիցակ միջնակարգ դպրոց
- 4. Արմավիր գյուղատնտեսական պետական քոլեջ
- 5. Բյուրեղավան մշակույթի պալատ

6. Եղվարդ	«Սպորտային իրեր»
7. Արտաշատ	թիվ 2 միջնակարգ դպրոց
8. Արտաշատ	ուսումնարան
9. Վեդի	թիվ 1 միջնակարգ դպրոց

2. թեքահարթակ կառուցել մուտքի մոտ և ներսում

1. Սպիտակ	քաղաքապետարան
2. Դիլիջան	մանկապատանեկան մարզադպրոց
3. Դիլիջան	կենտրոնական գրադարան
4. Գավառ	թիվ 1 հատուկ դպրոց
5. Գավառ	դրամատիկական թատրոն
6. Աշտարակ	Ներսես Աշտարակեցի համալսարան

3. չեզոքացնել շենք

1. Ստեփանավան	մանկապարտեզ
2. Վանաձոր	Սոց. ապահովման պետ. հիմնադրամ
3. Գավառ	հացաբուլեղենի գործարան
4. Կարբի	«Իշխան» ՍՊԸ
5. Արմավիր	պոլիկլինիկա
6. Երևան	ազգային պատկերասրահ

4. թեքահարթակ կառուցել և չեզոքացնել շենք

1. Վանաձոր	մշակույթի պալատ
2. Սպիտակ	կենտրոնական գրադարան
3. Ջրառատ	Ջրառատի միջնակարգ դպրոց
4. Գյուճիկ	պետական դրամատիկական թատրոն

5.	Գյումրի	ուռուցքաբանական դիսպանսեր
6.	Գյումրի	ավստրիական մանկական հիվանդանոց
7.	Ախուրյան	Ախուրյանի պոլիկլինիկա
8.	Դիլիջան	քաղաքային պոլիկլինիկա
9.	Դիլիջան	քաղաքային հիվանդանոց
10.	Սևան	պետական քոլեջ
11.	Վարդենիս	թիվ 2 դպրոց
12.	Վերին Գետաշեն	մշակույթի տուն
13.	Գավառ	մշակույթի քաղաքային պալատ
14.	Մարտունի	ոսկերչական գործարան
15.	Եղեգնաձոր	մարզային մշակույթի կենտրոն
16.	Եղեգնաձոր	պատմական միջավայրի պահպանության ծառայություն
17.	Կարբի	բուժամբուլատորիա
18.	Արմավիր	թիվ 1 միջնակարգ դպրոց
19.	Բյուրեղավան	մշակույթի պալատ
20.	Արտաշատ	համալսարան
21.	Արարատ	տեխնիկում
5. լայնացնել սանհանգույցի դռները		
1.	Գյումրի	տիկնիկային թատրոն
2.	Գյումրի	գրադարանների կենտրոնացված համակարգ
3.	Զրառատ	Զրառատի գյուղապետարան
4.	Իջևան	մշակույթի տուն
5.	Դիլիջան	ՀՀ ժող. արվեստի պետական թանգարան
6.	Մարտունի	«Վանեվան» համալսարան
7.	Գավառ	մանկական գեղարվեստի դպրոց
8.	Ճամբարակ	հիվանդանոց
9.	Եղեգնաձոր	մարզային պետական քոլեջ
10.	Եղեգնաձոր	«Գիտելիք» համալսարան
11.	Եղեգնաձոր	մարզային գրադարան
12.	Եղեգնաձոր	երկրագիտական թանգարան
13.	Եղեգնաձոր	քաղաքապետարան

14. Եղեգնաձոր	փոստային մասնաճյուղ
15. Եղեգնաձոր	քաղաքային հիվանդանոց
16. Եղեգնաձոր	քաղաքային պոլիկլինիկա
17. Եղեգնաձոր	դեղատուն
18. Եղեգնաձոր	ատամնապրոթեզարան
19. Սիսիան	թիվ 5 միջնակարգ դպրոց
20. Արմավիր	թիվ 4 միջնակարգ դպրոց
21. Նոր Գեղի	գյուղական քոլեջ
22. Աբովյան	էներգետիկական քոլեջ
23. Աբովյան	ճարտարագիտական քոլեջ
24. Եղվարդ	մշակույթի տուն
25. Հրազդան	«Հրազդան ցեմենտ» ՓԲԸ
26. Բյուրեղավան	ապակյա տարաների գործարան
27. Եղվարդ	Նաիրիի հիվանդանոց
28. Նոր Հաճն	պոլիկլինիկա
29. Արարատ	մշակույթի տուն
30. Արտաշատ	պիտներ պալատ
31. Մասիս	մշակույթի տուն
32. Արտաշատ	մարզպետարան
33. Մասիս	Հայփոստի մասնաճյուղ
34. Երևան	պետական բժշկական քոլեջ
35. Երևան	մատենադարան
36. Երևան	մետրոպոլիտեն
37. Երևան	«Հայաստան» հանրախանութ
38. Երևան	«Շանթ» ընկերություն
39. Երևան	թիվ 6 պոլիկլինիկա
40. Երևան	հանրապետական կլինիկական հիվանդանոց
41. Երևան	թիվ 1 կլինիկական հիվանդանոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության ծրագրային հիմունքները, ինչպես նաև հաշմանդամների սոցիալական պաշտպանության Ազգային հանձնաժողովի ստեղծման և գործունեության կարգերը:

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին օրենսդրությունը

1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից և այլ իրավական ակտերից:
2. Եթե Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Հոդված 2. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը

1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը տնտեսական, սոցիալական և իրավական միջոցառումների համակարգ է, որը հաշմանդամների համար ստեղծում է կենսագործունեության սահմանափակումները հաղթահարելու, փոխարինելու (փոխհատուցելու) պայմաններ և ապահովում է նրանց իրավունքների և ազատությունների իրականացումը:

2. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակներն են՝
 - ա) հաշմանդամների համար հավասար իրավունքների ապահովումը.
 - բ) հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովումը:
3. Սույն օրենքի իմաստով՝
 - ա) հաշմանդամների համար հավասար իրավունքների ապահովումը՝ կենսագործունեության սահմանափակումների հաղթահարման, փոխարինման (փոխհատուցման) պայմանների ստեղծմամբ հաշմանդամների համար Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված նույն իրավունքների, ազատությունների և պարտականությունների ապահովումն է, ինչպիսիք ունեն այլ անձինք.
 - բ) հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովումը՝ կենսագործունեության սահմանափակումների հաղթահարման, փոխարինման (փոխհատուցման) պայմանների ստեղծմամբ կրթության, աշխատանքի, տեղեկատվության, սպասարկման և հասարակական կյանքի այլ բնագավառներում հաշմանդամների մասնակցության մյուս քաղաքացիներին համարժեք հնարավորության ապահովումն է:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 3. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության ծրագրերը

1. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունն իրականացվում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության համալիր ծրագրով (այսուհետ՝ Համալիր ծրագիր) սահմանված ժամկետներում և կարգով:
2. Համալիր ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը՝ համապատասխան օրենքի ընդունմամբ:
3. Համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և արտացոլվում հաշմանդամների սոցիալական պաշտպանության տարեկան ծրագրերում (այսուհետ՝ Տարեկան ծրագիր):

Հողված 4. Համալիր ծրագրի սկզբունքները և բովանդակությունը

1. Համալիր ծրագրի հիմնական սկզբունքներն են՝
 - ա) առավել արդյունավետ օգտագործման համար ֆինանսական, նյութական և աշխատանքային ռեսուրսների համախմբումը.
 - բ) համալիր միջոցառումների իրականացումը.
 - գ) պահանջվող արդյունքին սահմանված վերջնաժամկետում հասնելը:
2. Համալիր ծրագիրը կազմված է հետևյալ բաժիններից՝
 - ա) հաշմանդամության հիմնախնդիրների վերլուծությունը.
 - բ) ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները.
 - գ) ծրագրի իրականացման փուլերը և ժամկետները.
 - դ) ծրագրի կատարմանն ուղղված միջոցառումների և աշխատանքների ցանկը.
 - ե) ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը.
 - զ) ծրագրի ղեկավարման կազմակերպումը և դրա իրականացման ընթացքի վերահսկողությունը.
 - է) ծրագրի իրականացումից սպասվող արդյունքի գնահատումը:
3. Հաշմանդամության հիմնախնդիրների վերլուծությունը պարունակում է հաշմանդամության առկա վիճակի նկարագրությունը, հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության խնդիրները, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածում որոշակի խնդիրների լուծման առաջնահերթության և հնարավորության հիմնավորումները:

Հողված 5. Համալիր ծրագրի մշակման և իրականացման ապահովումը

Համալիր ծրագրի մշակումը և իրականացումն ապահովում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Լիազորված մարմինը), որը՝

- ա) նախապատրաստում է Համալիր ծրագրի մշակման նախնական խնդիրները.
- բ) համակարգում է ծրագիրը մասնագետների աշխատանքը.
- գ) ծրագրի կատարողների հետ համաձայնեցնում է նախատեսվող միջոցառումների կատարման ժամկետները, ֆինանսավորման ծավալները և ժամկետները.
- դ) համապատասխան իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքում է պայմանագրեր՝ ծրագրի ֆինանսավորման մտադրության մասին.
- ե) ծրագիրը ներկայացնում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության Ազգային հանձնաժողովի փորձաքննությանը և դրա արդյունքում իրականացնում է ծրագրի լրամշակումը.

- գ) ապահովում է ծրագրով նախատեսված միջոցառումների՝ սահմանված ժամկետներում իրականացումը.
- ե) ապահովում է ծրագրի իրականացման համար պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման արդյունավետությունը.
- ը) օրենքով սահմանված կարգով ներկայացնում է Տարեկան ծրագրերի կատարարման մասին հաշվետվությունները:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հոդված 6. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության Ազգային հանձնաժողովը

1. Համալիր և Տարեկան ծրագրերի, դրանց հաշվետվությունների և կատարումն ապահովող այլ փաստաթղթերի անկախ և մասնագիտական փորձաքննության, ինչպես նաև հաշմանդամների իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով ստեղծվում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության Ազգային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
2. Հանձնաժողովն ստեղծվում է սույն օրենքով սահմանված կարգով, գործում է սույն օրենքի, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում:

Հոդված 7. Հանձնաժողովի իրավասությունը

1. Հանձնաժողովն օրենքով սահմանված կարգով՝
 - ա) իրականացնում է Համալիր և Տարեկան ծրագրերի, դրանց հաշվետվությունների և կատարումն ապահովող այլ փաստաթղթերի նախնական և ամփոփիչ փորձաքննություններ և տալիս է եզրակացություններ.
 - բ) քննարկում է հաշմանդամների իրավունքների և ազատությունների խախտմանը վերաբերող առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և ընդունում է որոշումներ.
 - գ) կարող է Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել հաշմանդամների սոցիալական պաշտպանությանն առնչվող իրավական ակտերի նախագծեր.
 - դ) կրթության և աշխատանքային զբաղվածության ապահովման բնագավառներում հաշմանդամների և այլ անձանց միջև ծագած վեճերի

լուծման նպատակով կարող է միջնորդել նրանց միջև հաշտության պայմանագրի կնքմանը և վերահսկել այդ պայմանագրի պայմանների կատարմանը (պահպանմանը)։

- ե) կարող է օրենքին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու, ինչպես նաև հաշմանդամի հետ կնքված պայմանագիրը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցով դիմել դատարան։
 - զ) իրականացնում է գիտական և փորձագիտական հետազոտություններ, ամփոփում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է մշակում դրա կատարելագործման ուղղությամբ։
 - է) համագործակցում է օտարերկրյա պետությունների պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ։
 - ը) կատարում է հրապարակային բացատրական աշխատանք՝ օրենքով սահմանված հաշմանդամների իրավունքների և ազատությունների մասին հասարակությանն իրազեկ դարձնելու նպատակով։
 - թ) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանում է հաշմանդամների սոցիալական պաշտպանությանն առնչվող անհրաժեշտ տեղեկություններ։
 - ժ) հաստատում է հանձնաժողովի կանոնադրությունը, նրա աշխատակազմի կազմակերպական կառուցվածքը, աշխատողների առավելագույն թիվը, հաստիքացուցակը և հանձնաժողովի ֆինանսական միջոցների օգտագործման կարգը։
- ժա) իրականացնում է օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ։
2. Սույն օրենքով սահմանված խնդիրները և գործառույթներն իրականացնելիս Հանձնաժողովն անկախ է պետական այլ մարմիններից։

Հոդված 8. Հանձնաժողովի փորձագիտական

Եզրակացությունները

1. Հանձնաժողովը փորձագիտական եզրակացություն է տալիս Համալիր և Տարեկան ծրագրերի, դրանց հաշվետվությունների, ինչպես նաև դրանց կատարումն ապահովելու նպատակով մշակված փաստաթղթերի վերաբերյալ՝ դրանց ստացման օրվանից՝ մեկամսյա ժամկետում։
2. Հանձնաժողովի եզրակացությունները եռօրյա ժամկետում պաշտոնապես ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով և կառավարություն։
3. Համալիր և Տարեկան ծրագրերի, ինչպես նաև դրանց հաշվետվությունների վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը ներառում է՝

- ա) ծրագրային խնդիրների և միջոցառումների հիմնավորվածության աստիճանը.
 - բ) ծրագրային խնդիրների և միջոցառումների ռեսուրսային, այդ թվում՝ ֆինանսական ապահովվածության գնահատականը.
 - գ) օրենքի պահանջներին ծրագրերի և դրանց հաշվետվությունների համապատասխանության գնահատականը.
 - դ) ծրագրերի, դրանց հաշվետվությունների մշակման և քննարկման ընթացքում ստացված, ինչպես նաև նախնական փորձաքննության արդյունքում իր ներկայացրած առաջարկությունները ծրագրերում, դրանց հաշվետվություններում ընդգրկելու կամ մերժելու մասին տեղեկանքը.
 - ե) ծրագրերի մշակվածության և իրատեսության վերաբերյալ ամփոփ գնահատականը.
 - զ) այլ տեղեկություններ եւ վերլուծություններ, որոնք Հանձնաժողովն անհրաժեշտ կհամարի ծրագրերի և դրանց հաշվետվությունների վերաբերյալ լիարժեք փորձագիտական եզրակացություն ներկայացնելու համար:
4. Համալիր և Տարեկան ծրագրերը, դրանց հաշվետվությունները Ազգային ժողովը քննարկում է Հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:
 5. Հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Հանձնաժողովի նախագահը:

Հոդված 9. Հանձնաժողովի գործունեության կարգը

1. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է դռնբաց նիստերի միջոցով:
2. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դա վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, և նիստին ներկա են Հանձնաժողովի առնվազն 6 անդամ:
3. Հանձնաժողովի արտահերթ նիստերը հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն չորս անդամի պահանջով:
4. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
5. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են, դրանք ստորագրում է նիստը նախագահողը:

Հոդված 10. Հանձնաժողովի անդամները

1. Հանձնաժողովը կազմված է 11 անդամից՝ նախագահ, տեղակալ և 9 անդամ:
2. Հանձնաժողովի կազմն ունի հետևյալ հարաբերակցությունը՝
 - ա) 6 անդամ՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.
 - բ) 5 անդամ՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառի բժշկական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:
3. Հանձնաժողովի անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների, բժշկական և գիտական հաստատությունների ներկայացմամբ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ վեց տարի ժամկետով:
4. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, ով՝
 - ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացի չի.
 - բ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
 - գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարած հանցագործությունների համար.
 - դ) օրենքով սահմանված կարգով գրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:
5. Հանձնաժողովի անդամները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել ներկայացուցչական որևէ մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, բժշկական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության:
6. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝
 - ա) ավարտվել է նրա պաշտոնավարման ժամկետը.
 - բ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
 - գ) նա դատապարտվել է ազատազրկման.
 - դ) օրինական ուժի մեջ է մտել նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի որոշումը.
 - ե) նա տվել է հրաժարական.
 - զ) նա նշանակվել է այլ պաշտոնի.
 - է) նա մահացել է:
7. Հայաստանի Հանրապետության Նախագահը կարող է Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել, եթե նա հիվանդության կամ այլ պատճառով երեք ամսից ավելի չի կատարել իր պաշտոնեական պարտականությունները:
8. Հանձնաժողովի անդամին պաշտոնից վաղաժամկետ ազատելու

դեպքում տվյալ պաշտոնում նշանակում կատարվում է այդ անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով:

Հոդված 11. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահին՝ Հանձնաժողովի անդամների կազմից ընտրում է Հանձնաժողովը:
2. Հանձնաժողովի նախագահը՝
 - ա) իր իրավասության շրջանակներում ներկայացնում է Հանձնաժողովը.
 - բ) հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, համակարգում և ապահովում է Հանձնաժողովի և նրա աշխատակազմի բնականոն աշխատանքը.
 - գ) աշխատանքի է ընդունում, աշխատանքից ազատում է, խրախուսման կամ կարգապահական տույժի է ենթարկում Հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներին.
 - դ) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և նիստերի արձանագրությունները.
 - ե) կազմակերպում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը.
 - զ) խորհրդակցական ծայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերին և քննարկվող հարցերի վերաբերյալ հայտնել իր գրավոր կարծիքը, որը ներառվում է նիստի արձանագրության մեջ.
 - է) մասնակցում է հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը և ներկայացմանը.
 - ը) իրականացնում է սույն օրենքով և Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
3. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի նախագահի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի անդամներից տարիքով առավել ավագը:

Հոդված 12. Հանձնաժողովի աշխատակազմը

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը և թվաքանակը հաստատում է Հանձնաժողովը:
2. Հանձնաժողովի աշխատակազմն ունի հետևյալ հարաբերակցությունը՝
 - ա) երկու երրորդը՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառի բժշկական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ.

- բ) մեկ երրորդը՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հոդված 13. Հանձնաժողովի ֆինանսավորումը

1. Հանձնաժողովը ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:
2. Հանձնաժողովի և նրա աշխատակազմի աշխատողների վարձատրության և պարգևավճարների չափերը հաստատում է Հանձնաժողովը:
3. Հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով և ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում ու Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (հանձնաժողովի ծախսերի նախահաշվի նախագիծը): Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքում ամրագրված՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացումը:
4. Հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտի ցուցանիշների համաձայնեցումը և պետական բյուջեի նախագծում դրանց ներառումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:
5. Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակն առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Պետական բյուջեի ծախսային մասում հանձնաժողովի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

ԳԼՈՒԽ 4

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 14. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջների խախտման համար

Սույն օրենքի պահանջները խախտելու համար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹԵՐ

Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԲՈՎԱՆՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
«Հավասար իրավունքներից՝ հավասար հնարավորություններ»	4
Հաշմանդամության հետևանքների հաղթահարման գործողությունների ազգային ծրագրի նպատակները	7
Առողջապահություն և վերականգնում	8
Մատչելիություն	12
Հաստատությունների ֆիզիկական մատչելիությունը հենաշարժողական խանգարումներով հաշմանդամների համար	12
Տեղեկատվական մատչելիության ապահովում լսողության խանգարումներ ունեցող մարդկանց համար, որոնց բանավոր խոսքը չի զարգացած	16
Մատչելիության ապահովում տեսողության խանգարումներով մարդկանց համար	16
Կրթություն	18
Զբաղվածություն	24
Մշակույթ	28
Սպորտ	30
Սոցիալական աջակցություն	32
Հասարակայնության վերաբերմունք և իրազեկություն	35
Հավելված 1. Մոնիտորինգի արդյունքները	38
Հավելված 2. Հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության մասին ՀՀ օրենք (նախագիծ)	53

ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ`
ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում հաշմանդամության հետևանքների հաղթահարման
գործողությունների ազգային ծրագիր

FROM EQUAL RIGHTS - TO EQUAL OPPORTUNITIES

National Plan of Action on Disability in Armenia